

# ՀԱՅԿԱՆ ԲԱՆԱԿ



АЙКАКАН БАНАК

НАИКАКАН БАНАК

3 • 1997



**ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴՅԱԿԱՐՈՒԹՅԱՆ  
ВО ИМЯ МИРА, БЕЗОПАСНОСТИ, ДЕМОКРАТИИ  
FOR PEACE, SECURITY, DEMOCRACY**



Հայաստանի Հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը  
և Ռուսաստանի Դաշնության առաջին փոխվարչապետ Ա. Չուբայսը  
անցնում են պատվո պահակախմբի շարքի առջևով (Մոսկվա, 1997 թ. օգոստոս)

Президент Республики Армения Л. Тер-Петросян  
и Первый вице-премьер Российской Федерации А. Чубайс  
обходят строй почетного караула (Москва, август 1997 г.)

The President of the Republic of Armenia L. Ter-Petrossian  
and the First Vice-Prime Minister of the Russian Federation A. Choubays  
review the Guard of Honor (Moscow August 1997 )

ՀՀ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՈՍՉՈՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Լուս է տեսանում 1995 թվականից  
տարին չորս անգամ

3.1997

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն  
Կ Ո Լ Ե Գ Ի Ա

Շիրխանյան Վ. Գ.  
(նախագահ)

Քոթանջյան Հ. Ս.  
(գլխավոր խմբագիր)

Աբրահամյան Մ. Ա.  
Ավետիսյան Մ. Վ.  
Գասպարյան Վ. Ս.

Գևորգյան Է. Ս.

Գորդիենկո Ի. Վ.

Զինակիչ Ա. Վ.

Խորխորունի Վ. Վ.

Կարապետյան Լ. Ս.

Հայրապետյան Վ. Ա.

Հարությունյան Ա. Թ.

Հարությունյան Գ. Բ.

Հարությունյան Մ. Հ.

Հարությունյան Վ. Վ.

Մարտիրոսով Լ. Ա.

Շահոսկեպարյան Ս. Ն.

Պալյան Հ. Ս.

Պետրոսյան Ա. Ա.

Պետրոսյան Գ. Լ.

Սարգսյան Ա. Գ.

Սարգսյան Ա. Ե.

Սարգսյան Մ. Ս.

Տեր-Գրիգորյանց Ն. Գ.

Տեր-Թադևոսով Ա. Ի.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ո Ա Զ Մ Ա Կ Ա Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Վ. Ա. Մուրադյան, Ականավոր գորավարը, մեծ  
հայրենասերը . . . . .

5

Ո Ա Զ Մ Ա Կ Ա Ն Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մ. Գ. Մելքոնյան, Աշխարհաքաղաքական գոր-  
ծոնք և Անդրկովկասի աշխարհաքաղաքական նկա-  
րագիրը . . . . .

28

Մ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Պ Ա Տ Ր Ա Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մ. Ա. Մարկիսյան, Հրամանատարների պատ-  
րաստությունը որպես ՀՀ ԶՈՒ-ի մարտունակությ-  
ան բարձրացման հիմք . . . . .

42

Ա Վ Ի Ա Ց Ի Ա

Ե. Ա. Համբարյան, Ավիացիոն տեխնիկայի շահա-  
գործումը ըստ տեխնիկական վիճակի . . . . .

52

Ո Ա Զ Մ Ա Կ Ա Ն Բ Ժ Ծ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ա. Վ. Ղազարյան, Զորակոչային տարիքի անձանց  
բժշկական հետազոտման կազմակերպման միջրունք-  
ները . . . . .

57

Զ Ի Ն Վ Ո Ր Ա Կ Ա Ն Հ Ո Գ Ե Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԵՎ. ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹ Յ Ո Ւ Ն

Ն. Ն. Գոլովին, Մարտի հետազոտություն. մար-  
դու որպես մարտիկի գործունեության և հատկությ-  
ունների հետազոտություն . . . . .

64

Ո Ա Զ Մ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Տ Ե Ր Մ Ի Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Վ. Խ. Բաղդասարյան, Համարի բառարան . . . . .

73

# «АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ  
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
N 3, 1997  
Издается 4 раза в год

## РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

В. Г. Ширханян (председатель); Г. С. Котанджян (главный редактор);  
М. А. Абрамян; М. В. Аветисян; В. Л. Айрапетян; А. Т. Арутюнян; В. В. Арутюнян;  
Г. Б. Арутюнян; М. А. Арутюнян; В. С. Гаспарян; Э. С. Геворгян; И. В. Гордиенков;  
А. В. Зиневич; А. С. Карапетян; А. А. Мартirosов; О. С. Палян; А. А. Петросян;  
Г. А. Петросян; А. Г. Саркисян; А. Е. Саркисян; М. С. Саркисян; Н. Г. Тер-Григорьянц;  
А. И. Тер-Татевосон; В. В. Хорхорунц; С. Н. Шахсуварян.

## НАУЧНОЕ КОНСУЛЬТИРОВАНИЕ И РЕДАКТИРОВАНИЕ

генерал-майор М. А. Абрамян; подполковник, д. мед. н., профессор Б. Н. Арутюнян;  
генерал-лейтенант В. В. Арутюнян; лейтенант, к. филос. н., доцент С. Г. Арутюнян;  
к. филос. н., доцент В. Х. Багдасарян; подполковник, д. ист. н., профессор Б. П. Балаян;  
полковник, д. полит. наук, академик Российской Академии военных наук Г. С. Котанджян;  
генерал-майор Л. А. Мартirosов; генерал-майор С. С. Мартirosян;  
гвардии подполковник в отставке, д. ист. н., засл. деят. науки РА В. А. Мурадян;  
майор, д. тех. н., академик Российской Академии военных наук А. Е. Саркисян;  
генерал-лейтенант Н. Г. Тер-Григорьянц.

## СОДЕРЖАНИЕ

### ВОЕННАЯ ИСТОРИЯ

В. А. Мурадян. Выдающийся полководец, горячий патриот . . . . . 5 (24)\*

### ВОЕННАЯ ПОЛИТИКА

М. Г. Мелконян. Геополитический фактор и геополитическая картина Закавказья . . . . . 28 (38)

### БОЕВАЯ ПОДГОТОВКА

М. С. Саркисян. Подготовка командиров—основа повышения боеспособности ВС РА . . . . . 42 (49)

### АВИАЦИЯ

Е. А. Амбарян. Эксплуатация авиационной техники по ее техническому состоянию . . . . . 52 (55)

### ВОЕННАЯ МЕДИЦИНА

А. В. Казарян. Принципы организации медицинского обследования лиц призывающего возраста . . . . . 57 (61)

### ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

Н. Н. Головин. Исследование боя. Исследование деятельности и свойств человека как бойца . . . . . 64

### ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

В. Х. Багдасарян. Словарь номера . . . . . 73

\* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается резюме на русском языке.

# «HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)

MILITARY-SCIENTIFIC JOURNAL  
OF THE MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA  
N 3, 1997  
Is published 4 times a year

## EDITORIAL BOARD

V. G. Shirkhanian (Chairman), H. S. Kotanjian (Editor-in-Chief),  
M. A. Abrahamian, M. V. Avetissian, V. S. Gasparian, E. S. Gevorgian, I. V. Gordienko,  
V. A. Hairapetian, A. T. Haroutunian, G. B. Haroutunian, M. H. Haroutunian, V. V. Haroutunian,  
L. S. Karapetian, V. V. Khorkhoruny, L. A. Martirosov, H. S. Palian; A. A. Petrossian,  
G. L. Petrossian, A. E. Sargssian, A. G. Sargssian, M. S. Sargssian, S. N. Shahsouvarian,  
N. G. Ter-Grigoriants, A. I. Ter-Tatevossov, A. V. Zinevich.

## SCIENTIFIC CONSULTING AND EDITTING

M. A. Abrahamian, Major-General; V. Kh. Baghdassarian, Ass.-Prof., Ph. D. (Philosophy);  
B. P. Balayan, Lieutenant-Colonel, Prof., Dr. of Hist. Sc.; B. N. Haroutunian, Lieutenant-Colonel,  
Prof., Dr. of Medicine; S. H. Haroutunian, Lieutenant, Ass.-Prof., Ph. D. (Philosophy);  
V. V. Haroutunian, Lieutenant-General; H. S. Kotanjian, Colonel, Dr. of Polit. Sc., Academician of  
Russian Military Sciences Academy; S. S. Martirossian, Major-General; L. A. Martirosov, Major-  
General; V. A. Mouradian, Guards Lieutenant-Colonel (Ret.), Dr. of Hist. Sc., Honorary Scientist of  
RA; A. E. Sargssian, Major, Dr. of Tech. Sc., Academician of Russian Military Sciences Academy;  
N. G. Ter-Grigoriants, Lieutenant-General.

Consultation in English Military Terminology: A. Armenian, Ph. D.

## CONTENT

### MILITARY HISTORY

V. A. Mouradian. The outstanding commander and passionate patriot . . . 5 (26)\*

### MILITARY POLICY

M. G. Melkonyan. The Geo-political factor and a Geo-political survey of  
Transcaucasia . . . . . 28 (39)

### MILITARY TRAINING

M. S. Sargssian. The Commander's training-basis for increase of combat  
readiness of the Armed Forces of the Republic of Armenia . . . . . 42 (50)

### AVIATION

E. A. Hambarian. The exploitation of aviation equipment in accordance  
with its technical condition. . . . . 52 (56)

### MILITARY MEDICAL SCIENCE

A. V. Kazarian. The principles of conducting medical examination of the  
draftees. . . . . 57 (62)

### MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

N. N. Golovin. Analysis of combat. The Research of individual's activity  
and his virtues (human characteristics) as a warrior . . . . . 64

### MILITARY-SCIENTIFIC TERMINOLOGY

V. Kh. Baghdassarian. Volume dictionary . . . . . 73

\* Numbers in brackets mean page of Summary in English.

## **Ի ԳԻՏՈՎԹՅՈՒՆ ԽՆԴԻՆԱԿԱՆԵՐԻ և ԸՆԹԵՐԱԿԱՆԵՐԻ**

Յոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ մեքենագրված երկու խնտերվալով, մինչև 15 էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինի նրա ռուսերեն ամփոփումը մինչև 2 էջ ծավալով:

Յեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Յեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Յեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Յոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

## **К сведению авторов и читателей**

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 15 страниц, напечатанных в два интервала, с приложением резюме на русском языке объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

Рукописи не возвращаются.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

## **For the information of the authors and readers**

The articles should be in Armenian. Please, supply two copies. Articles are to be double spaced and not exceed 15 pages in length. Provide Russian summaries (2 page maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinion expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures, and photos should be of print quality.

Manuscripts are not returned.

Please explain acronyms.

# ՈԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱՆԱՎՈՐ ԶՈՐԱՎԱՐՅ, ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱՍԵՐՅ

(Հ. Բ. ԲԱԴՐԱՄՅԱԼԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԱԽՎ)

**Վ. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ, գլարդիայի պաշտոնաթող փոխնդապետ,  
պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ**

Յուրաքանչյուր քաղաքակիրը ժողովուրդ ունի այնպիսի փառապանծ զավակներ, որոնց կիշտատակը տարիների հետ ոչ միայն չի խամրում, այլև հակառակը՝ էլ ավելի լուսավոր ու պայծառ է դառնում: Ժամանակի լույսի տակ նըրանց գործերն ու արարութները էլ ավելի նշանակալիք ու ծանրակշիռ են երևում՝ դառնարով իրենց ժողովրդի անցյալի ու ներկայի մի անվաստելի մասը: Նրանց կերպարները, սիրանքները հուսափ բարոյական ուղեցույց են դառնում ներկա ու ապագա սերունդների համար: Այդպիսի մարդկանց շարքին է իրավամբ դասվում հայ ժողովրդի պանծալի զավակ, Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Հովհաննես Քրիստոֆորի Բաղրամյանը, որի ծննդյան 100-ամյակը նշվում է ընթացիկ տարում: Բաղրամյանը, լինելով երկաթուղարին բանվորի ընտանիքի զավակ, լեգենդար ուղի անցավ տեղի ուսումնարանի աշակերտից ու ցարական բանակի շարքայինից մինչև մեծ տերության մարշալ և դարձավ այն ականավոր խորհրդային զորավարներից մեկը, որոնք ֆաշիստական Գերմանիայի ու նրա կամակատարների մինչև ատամանները զինված հորդաների դեմ մղյած մահացու գոտենմարտում ապահովեցին նրանց լիակատար ջախչախումը և փրկեցին համաշխարհային քաղաքակրթությունը ոչնչացումից՝ խաղաղությունը բերելով մեր մոլորակին:

Հ. Բ. Բաղրամյանը ծնվել է 1897 թ. դեկտեմբերի 2-ին Անդրկովկասայան երկաթուղու Ելիկավետպոլ կայարանում (ներկայումս Գանձակ (Գյանջա) քաղաքում), ճանապարհային բանվորների մի

վինանոցում: Նա մեծանում էր համերաշխ բանվորական կոլեկտիվի երեխաների հետ: Ամեն ամառ նա մեկնում էր պապի մոտ՝ իր հարազատ Զարդարյանու գյուղը, որը գտնվում էր բարձրադիր սարավանդի վրա: Հովհաննես Բաղրամյանն իր ողջ կյանքում պահպանեց մեծ սերը այն վայրերի նկատմամբ, որտեղ անց էր կացրել իր մանկությունը, որտեղ առնականացել էր իր սիրուղը:

1907—1912 թթ. պատանի Բաղրամյանը սովորել է անդի երկաթուղային ուսումնարանում, այնուհետև՝ Թիֆլիսի երկաթուղային տեխնիկական ուսումնարանում, որը բարձր գնահատականներով ավարտեց 1915 թ. մայիսին: Սուանալով ճանապարհային ծառայության տեղամասի տեխնիկի մասնագիտություն՝ նա աշխատանքի անցավ Ելիկավետպոլ կայարանում: Թվում էր, թե, ունենալով այն ժամանակների համար պատկառելի կրթություն, լավ մասնագիտություն և գտնվելով ծնողների խնամքի տակ, կառելի էր հանգիստ ապրել, ընտանիք կազմել և գրադիվել զավակների դաստիարակությամբ: Թեև արդեն մոտ էր զորակոչային տարիքը՝ 18 տարին, բայց դա կարող էր նրան չանհանգաւացնել: Երկաթուղայիններին բանակ չէին տանում:

Սակայն Հովհաննես Բաղրամյանին մտատանջում էր մի այլ հանգամանք՝ 1915 թ. գարնանը երիտթուրքական դափնիճների կողմից ձեռնարկված հայապանությունը: Մարշալն իր հուշերում, խոսելով այն օրերի իր մատանջությունների մասին, նշում է, որ ինքը չէր ցանկանում ինորու մնալ ատելի թշնամու դեմ իր հարպատ ժողովրդի կողմից մըդ-վող պայքարից, որ ձգուում էր ուպմա-

ճակատ մեկնելու՝ ոռւս զինվորների հետ թուրք դահիճների դեմ կովելու համար: «Դրդված այդ զգացմունքներից, — իր հուշերում գրում է Բաղրամյանը, — և հաղթահարելով ծնողներիս դիմադրությունը՝ 1915 թ. հոկտեմբերի 9-ին ես կամավոր մտա ոռւսական բանակի շարքե-



Գեներալ-լեյտենանտ Հովհաննես Բաղրամյան  
1942 թ.  
(գնդապետ Հրանտ Բաղրամյանի հավաքածուից,  
տպագրվում է առաջին անգամ)

րը»<sup>1</sup>: Հենց այդ ժամանակ էլ իր խնդրանքով նա ուղարկեց ուսպմածակատ:

Ուսպմածակատում 18-ամյա պատանուն որպես շարքայինի հարկ եղավ կրելու պատերազմի բոլոր փորձությունները: Բայց ֆիզիկապես առողջ, բարոյապես տպանապահը պատանին, արիաբար հաղթահարելով այդ դժվարությունները, ձեռք բերեց մարտում խիստ և իր դատողություններում լրջախոհ ուսպմիկի համբավ: Եվ պատահական չէր, որ երբ նրա գնդից պահանջվեց ներկայացնել 3—4 շարքայինի՝ ենթասպառական դրա-

<sup>1</sup> И. Х. Баграмян. Моя воспоминания. Е., 1979, сс. 25—26.

րոց ուղարկելու համար, առաջին հերթին նշվեց Բաղրամյանի անունը: 1917 թ. լսկություն նա 1-ին թիֆլիսյան ենթասպայական դպրոցի յունկեր էր: Իսկ դպրոցն ավարտեց արդեն փետրվարյան հեղափոխությունից հետո՝ 1917 թ. հուլիսին: Հատկանշական է երիտասարդ Բաղրամյանի կենսագրության հետևյալ մասնամասը: Երբ, ավարտելով դպրոցը, նա ուղարկվեց պահեստային գունդ որպես կրտսեր սպա, զինվորական ժողովը ազատասեր սպային միաձայն ընտրեց վաշտի հրամանատար: Դա տագնապ առաջ բերեց զորամասի հրամանատարական շրջաններում, և Բաղրամյանին շուտափությությունը ուղարկեցին թուրքական ուսպմածակատ՝ դարձյալ որպես կրտսեր ըսպա: Այս կոչումով նա մասնակցեց թուրքական հորդաների դեմ Կարսի ուղրությամբ մղված մարտերին և Սարդարապատի ճակատամարտին: Երբ 1920 թ. նոյեմբերին Հայաստանում հաստատվեց Խորհրդային իշխանություն, 23-ամյա Բաղրամյանը դարձավ Կարմիր բանակի 76-րդ Հայկական հրաձգային դիվիզիայի 1-ին հեծյալ գնդի գնդապայտին հեծելավաշտի հրամանատար:

1923 թ. գարնանը դիվիզիա այցելեց Խորհրդային Հայաստանի ուսպմական գործերով նոր ժողովոմ, քաղաքացիական պատերազմի լեզննդար հերոս Գ. Գ. Գայը (Հայկ Դմիտրիի Բժշկյանց): Հեծյալ գունդը շարքեց ժողովոմի հետ հանդիպման համար: Բաղրամյանն իր հուշերում մանրամասնորեն պատմում է, թե ինչպես Գայն ամբողջ օրն անցկացրեց գնդում, ինչպես կատարեց զորագործություն գործեց ինձ վրա: Դա մի այնպիսի զորագործ էր, որին ցանկանում էի նմանվել ամեն ինչում: Ես ձգտում էի որքան հնարավոր է ավելի հանգամանորեն ծանոթանալու նրա փայլուն մարտական կենսագրությանը, և դա ինձ հաջողվեց<sup>2</sup>:

Այդ ժամանակ Բաղրամյանը, որն արդեն դարձել էր այդ դիվիզիայի գնդի

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 124:

հրամանատար, չեր կարող անգամ երեւակայել, որ Գայի լուսավոր կերպարը խըթան կդառնա իր բարեկամությանը մի այլ՝ ապագա լեզննդար մարդու և մեծ դորավարի՝ Գ. Կ. Ժուկովի հետ։ Խոյ դա կատարվեց հետևյալ կերպ։

Երբ Ժուկովը, որին Լենինգրադի բարձրագույն հեծելավորային գպրոց ուսման էր ուղարկել այդ ժամանակ արդեն 7-րդ սամարյան հեծելավորային դիվիզիայի հրամանատար նշանակված Գայը, ծանոթացավ դպրոցի՝ գնդերի հրամանատարների ուսումնական խրմում ընդգրկված մի հայ երիտասարդի՝ Հովհաննես Բաղրամյանի հետ, ապա նրա մեջ տեսավ իր սիրելի գորավարի ընությագծերը հիշեցնող շատ գծեր։ Խոյ թե ինչ տպավորություն գործեց Ժուկովը Բաղրամյանի վրա, այդ մասին վերջինը գրել է իր հուշերում. «Գեորգի Կոնստանտինովիշ Ժուկովը մեր խմբի ունկընդիների մեջ ամենաընդունակներից մեջն էր համարվում։ Այդ ժամանակ արդեն նա առանձնանում էր ոչ միայն վառ արտահայտված կամային որակներով, այլև ինքնատիպ մտածողությամբ»<sup>3</sup>։

Մարտավարության պարապմունքներում նրանք երկուսն էլ համայնքանիցների հետ բանավեճերում աչքի էին ընկույտ իրենց խատիվ տրամաբանական երլույթներով։ Դա կարևոր գործն էր նրանց բարեկամության ամրապնդման համար։ Ուսումն ավարտելուց հետո Բաղրամյանը վերադարձավ իր գունդը, որի հրամանատարը եղավ 8 տարի։

1930 թ. Բաղրամյանը կանչվեց Մոսկվա՝ Կարմիր բանակի բարձրագույն հրամանատարական կազմի կատարելագործման հռամսյա դասընթացներին։ Ավարտելով այդ դասընթացները՝ նա հաջորդամբ հանձնեց մրցությախին ըընսությունները և, ստանալով բավականաշափ բարձր ընդհանուր նիշ, ընդունվեց Մ. Վ. Ֆրունզեի անվան ուսպագիտական ակադեմիան։ 1934 թ. գերազան-

ցությամբ ավարտելով այն՝ Բաղրամյանն ուղարկվեց Կիևի վինվորական օլրուտ որպես հեծելավորային դիվիզիայի շտաբի պետ։ Այստեղ նա դարձյալ փայեց իր շտաբական և հրամանատարական գիտելիքներով։ Օլրուտի հրամանատարությունը բավմիս նշել է դա՝ օկրուգային գորավարժությունների ու տարաշարժների արդյունքներն ի մի բերելու ժամանակ։ Ըստ ամենայնի հենց դա հիմք հանդիսացավ Բաղրամյանին գլխավոր շտաբի 1936 թ. ստեղծված ակադեմիա ընդունվելու համար։ Ձեն ինչպես Բաղրամյանն իրն գրանուրեց երկրի այդ ամենաբարձր ռազմագիտական ուսումնական հաստատությունում, այդ մասին վկայում է այն փաստը, որ Բաղրամյանը, 1938 թ. աշարտելով ակադեմիան, թողնը նըլք այնտեղ որպես ավագ դասախու։

Գլխավոր շտաբի ակադեմիայում երկու տարի ստվորելուց և երկու տարի դասաւանդելուց հետո գնդապետ Բաղրամյանը մեծ ցանկություն ունեցավ վերադառնալու շարային ծառայության, բանակ։ Մի անգամ, հանդիպելով Կիևի հատուկ վինվորական օլրուտի շտաբի իրեն ծանոթ գնեներապետի մեջին, Բաղրամյանը պատմեց նրան իր ցանկության մասին։ Ծանոթը խորհուրդ տվեց երկու խոսք գրել օլրուտի հրամանատար նշանակված Ժուկովին և խոստացավ գրությունը հանձնել անձամբ նրան։ Բաղրամյանն այդպես էլ վարվեց։ Եվ 1940 թ. դեկտեմբերին Կիևի հատուկ վինվորական օլրուտի հրամանատարի միջնորդությամբ գնդապետ Բաղրամյանը ԽՍՀՄ պաշտպանության ժողովումի հրամանով նշանակվեց այդ օլրուտի 12-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետ։

Հին բարեկամների հանդիպումը Կիևում շատ ջերմ էր։ Խոյ երբ Բաղրամյանը պատրաստվում էր ծառայության վայր մեկնելու, Ժուկովն ասաց, որ առաջմն պետք է մնայ Կիեվում, քանի որ կան կարևոր գործեր։ Եվ պատմեց, որ Մոսկվայում կազմակերպվում է վինված ուժերի դեմքավար կազմի խիստ պատասխանատու համարանակային խորիոր-

<sup>3</sup> Հ. Բ. Բաղրամյան, նշ. աշխ., էջ 132 (այդ մասին տես նաև Գ. Ա. Մորավյան, Մարշակ Բաղրամյանը մարշակ Ժուկովի մասին։ «ՀՅ», հն. 1-2, 1997 թ.: Խմբ.)։

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 167-168։

դակցություն, որին մասնակցելու է նաև Ի. Վ. Ստավինը: Կիևի հատուկ վիսվորական օկրուգի հրամանատարին հանձնարարված էր այդ խորհրդակցությունում հանդես գալ «Ժամանակակից հարձակողական օպերացիայի բնույթի մասին» թեմայով զեկուցումով: Ժուկովը Բաղրամյանին առաջարկեց օգնել իրեն այդ զեկուցման վրա աշխատանքում՝ ներգրավելով օկրուգի շտաբի օպերատիվ բաժնի մտահատու ապաներին:

Նշանակված ժամկետին նախագիծը ներկայացվեց ժողովում: Խակ երկու շաբաթ անց զանգահարեց գլխավոր շտաբի պետ Կ. Ա. Մերեկովը և հայտնեց, որ զեկուցման նախագիծը դեկավարության հավանությանն է արժանացել և պետք է պատրաստվել ելույթի<sup>5</sup>:

Խորհրդակցությունը կայացավ 1940 թվականի գեկտեմբերին: Այդ նույն օրերին ժուկովի ներկայացմամբ պաշտպանության ժողովում հրամանով գնդապետ Հ. Ք. Բաղրամյանը նշանակեց Կիևի հատուկ վիճակության օկրուգի ըշտաբի օպերատիվ բաժնի պետ — շտաբի պետի տեղակալ: Հենց որ հրամանը ստորագրվեց, ժուկովը զանգահարեց Մոսկվայից, ջերմ և սրտագին շնորհագրեց Բաղրամյանին նոր նշանակման առթիվ և խնդրեց ամբողջությամբ ներգրավել իր նվարի կեսերին ծրագրված օկրուգային հավաքի համար նյութերի պատրաստման աշխատանքներում: Օկրուգի հրամանատարը խնդրեց ուրվագծել այդ հավաքում իր (ժուկովի) զեկուցման հիմնական թեզիները:

Ժուկովը Կիև վերադարձավ 1941 թ. հունվարի 16-ի առավոտյան՝ արդեն նշանակված լինելով գլխավոր շտաբի պետ: Վերադառնալուց անմիջապես հետո հանդիպելով Բաղրամյանին՝ նա խնդրեց քննարկման ներկայացնել պատրաստված նյութերը: Երեսկոյան նա դրանք վերադարձաց աննշան ուղղումներով: Ինչպես նշված է Բաղրամյանի հուշերում, ժուկովն ըստ երևույթին գոհ

էր նոել պատրաստված նյութերից: Նա Բաղրամյանին մենքնեց ևս մի թղթապանակ և ասաց. «Սա իմ զեկուցումն է ձըշտումներով և լրացումներով: Կարգադրիր, որ վերամերենագրեն: Հատկապես վերափոխել եմ Գերմանիային վերաբերող էշերը: Իրադրությունը փոփոխվում է եվրոպայում վերմախտի յուրաքանչյուր նոր հաղթանակից հետո: Ըստ երևույթին, ֆաշիստական Գերմանիայի հետ բախումից խուսափելն անհնար է», տիտուր ավարտեց բարեկամի հետ իր վատահական վրույցը ժուկովը:

Երբ պատերազմն սկսվեց, Բաղրամյանը վրաբեցնում էր Կիևի հատուկ վիճական օկրուգի շտաբի օպերատիվ բաժնի պետ — շտաբի պետի տեղակալի պաշտոնը: Այդ պաշտոնում նա գործուն մասնակցություն ու նեցավ Կիևի պաշտպանության կազմակերպմանը: Շնորհիվ քաղաքի պաշտպանների տոկունության, անձնութաց դիմադրության տապալվեցին Ոնկրաֆինայի մայրաքաղաքի արագ գրավման թշնամու պլանները, ինչը նպաստեց պատերազմում երկարաւուն դիմադրության մշակված ստրատեգիայի կենսագործմանը: Կիևի պաշտոնության կազմակերպմանն արդյունավետ մասնակցության համար գնդապետ Հ. Ք. Բաղրամյանին 1941 թ. օգոստոսի 12-ին շնորհվեց գեներալ-մայորի կոչում:

Երկրի հարավում 1941 թ. աշնանը ձեռնարկված օպերացիաներում գեներալ Բաղրամյանն աշքի ընկալ իր մարտական փորձառությամբ և ռազմական գիտելիքներով: 1941 թ. նոյեմբերի 29-ին Ռուսունի ազատագրման նպատակով Հարավյան ուսպանական կորպուսի հաջող գործողությունների և հակառակորդի եկեղյան խմբավորման շահিষնաման նպատակով Հարավ-արևմտյան ռազմաճակատի կորպուսի գեներալ-մայորի կոչում: Այդ ժամանակ էլ նա դարձավ Հարավ-արևմտյան ռազմաճակատի շտաբի պետ:

<sup>5</sup>Տես Գ. Կ. Ժյոկով. Վօսպօմինան և բանականացումներ. Երևան, 1974, է. 205 (տես նաև Վ. Ա. Մուրադյան, նշ. աշխ. Խմբ.):

<sup>6</sup>Հ. Ք. Բաղրամյան, նշ. աշխ., էջ 179:

1942 թ. ամռանը Բաղրամյանի ռապմական կյանքում սկսվեց գործունեության մի նոր, ավելի պատահանատու շրջան: 1942 թ. հունիսի 15-ին Գերագույն գլխավոր հրամանատարության հրամանով նա նշանակվեց 16-րդ բանակի հրամանատար, մի բանակ, որը գեներալ Ռոկոսովսկու ղեկավարությամբ անխամբելի փառքի էր արժանացել Մոսկվայի համար մղամարտի մարտերում: Հատկանշական է, որ երբ, հանդիպելով ռազմաճակատի հրամանատար Գ. Կ. Ժուկովին, Բաղրամյանն իր երախտագիտությունը հայտնեց նրան (քանի որ նա նպաստել էր այդ նշանակմանը), վերջինս պատասխանեց, որ, նախ դա արվել է հօգուտ գործի, իսկ երկրորդ՝ դրա նախաձեռնողը Գերագույն գլխավոր հրամանատարն է, որին էլ պետք է հայտնել շնորհակալությունը<sup>7</sup>:

1942 թ. աշնանը Բաղրամյանի 16-րդ բանակը հետ մղեց հակառակորդի մի շարք խոշոր հարձակողական գործողություններ: 1942—1943 թթ. ձմռանը, երբ Արևմտյան ռազմաճակատի զորքերը ձեռնարկեցին հարձակողական գործողություններ, Բաղրամյանի 16-րդ բանակն աշխի ընկավ ֆայլուն կերպով վարած մի քանի մարտերով, որոնց շնորհիվ զալչափակեցին թշնամու մեծ թվով դիվիզիաներ: 16-րդ բանակի փառքն էլ ավելի մեծացավ. նրան շնորհվեց 11-րդ գլխավորական բանակի անվանում, իսկ նրա հրամանատար Հ. Թ. Բաղրամյանը պարզեցաւ Կուտուզովի 1-ին աստիճանի շքանշանով:

Բաղրամյանի ռազմական ճակատագրում հատուկ տեղ ունի Կուրսի ճակատամարտը: Այն դարձավ, մի կողմից, Բաղրամյանի զորավարական կարողությունների լուրջ փորձություն, մյուս կողմից՝ այդ կարողությունների դրսեփորման լայն դաշտ:

Երբ Գերագույն գլխավոր հրամանատարության ռազմակայանը նախապատրաստվում էր 1943 թ. ամառային մարտաշավին, Արևմտյան ռազմաճակատի հրամանատար Վ. Սոկոլովսկին և

<sup>7</sup>Տես Ի. Խ. Բագրամյան. Վելիկու նարօւ սանօնա. Յօնիզեգատ, Մ., 1984, ս. 27.

Բրյանսկի ռազմաճակատի հրամանատար Մ. Ռեյտերը առաջարկեցին 11-րդ գլխավորական բանակի զորքերը մարտի մեջ մտցնելու այնպիսի պլան, որի դեմ կտրուկ առարկություններ արեց բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Բաղրամյանը: Սակայն ռազմաճակատների հրամանատարներին հաջողվեց իրենց պլանը համաձայնեցնել Գլխավոր շտաբի հետ: Բայց Բաղրամյանը շարունակում էր առարկել և առաջարկում էր հարձակողական գործողություններում այդ բանակի ներգրավման իր սեփական տարբերակը: Նա նույնիսկ պատրաստ էր հրաժարական տալու, եթե իր տարբերակը վերջնականորեն մերժվի:

Ըստ երեսույթին Ժուկովի կամ էլ հենց ռազմաճակատների հրամանատարների միջոցով այդ վեճի մասին հայտնի դարձալ Ստալինին: Եվ երբ ամառային օպերացիաների պլանը քըն-նարկիում էր ռազմակայանի նիստում, Ստալինը հանկարծ հարցրեց. «Բոլ որտե՞ղ է ընկեր Բաղրամյանը»: Գլխավոր շտաբի պետի տեղակալ գեներալ Անտոնի տված բացարությունները շրավարեցին նրան: Գերագույնը ճաշի համար ընդմիջում հայտարարեց և կարգադրեց այդ ժամանակամիջոցում Օրյովի մոտիկ շտապ բերել Բաղրամյանին: Երբ խորհրդակցությունը վերակայեց և Բաղրամյանի ներկայությամբ կրկին ընթերցվեց Օրյովան օպերացիայի վերաբերյալ ռազմակայանի որոշման նախագիծը, Ստալինը հարցրեց, թե բոլորն են արդյոք համաձայն այդ որոշմանը. գույն ինչ-որ մեկն ա՞յլ կարծիք ունի: Բաղրամյանը հայացը հառեց Ստալինին, և Գերագույնը նկատեց դա: Բաղրամյանն իր հուշերում այսպես է նկարագրում այդ պահին իրեն համակած հուզմունքը. «Ես նատած էի ասես ասեղների վրա: Հիմա Գերագույնը հավանություն կտա այդ պլանին, և այն երկաթե ուժ կատանա: Բայց ինչպես վիճարկել ռազմաճակատների հրամանատարների առաջարկությունները, որոնք արժանացել են գլխավոր շտաբի հավանությանը: Ձե՛ս որ կարող են թյուր կերպով մեկնաբանել իմ

համառությունը: Ես այն ժամանակ բանամի բավականին երիտասարդ իրամանատար էի... Դա ինձ համար վերջին հնարավորություն էր: Ես խոսելու թույլորվություն խնդրեցի: Ստալինը ոչ առանց զարմանքի, բայց միաժամանակ բարյացակամորեն նայեց ինձ: Գերագույնը միայն մեկ բառ ասաց՝ «Խնդրեմ»:

«Դարձյալ բայց եմ քարտեզները, — շարունակում է Բաղրամյանը: — Փորձելով զապել հուկամունք՝ ես շարադրեցի իմ տեսակետը»<sup>8</sup>:

Բաղրամյանից հետո երրորդ ունեցան Վ. Սոկոլովսկին և Մ. Ռեյտերը: Նրանք ամեն կերպ ջանում էին հերքել բանակի իրամանատար Բաղրամյանի ժիաստարկները, մեղադրում էին նրան այն բանում, որ նա ցանկանում է ստեղծել իր համար նպաստավոր պայմաններ: Խորհրդակցության բոլոր մասնակիցները շունչները պահած սպասում էին, թե ինչ կապի Գերագույնը: Իսկ նա հանկարծ ցածր ձայնով և շատ հանդարտ ասաց. «Այս Բաղրամյանը խելացի բան է ասում: Եվ, ըստ իս, նրա առաջարկությանը պետք է համաձայներ: Իսկ ինչ վերաբերում է իրամանատարի ձրգումանը՝ խնդրի կատարման համար ավելի նպաստավոր պայմաններ ստեղծելու, ասպա դա գովելի է: ԶԵ՝ որ անհաջողության դեպքում պատասխանատվությունը նրա վրա կը նկնի»<sup>9</sup>:

Ներկաներից ոչ մեկն այլևս չիմանց: Պլանի բաղրամյանական տարբերակն ընդունվեց առանց էական փոփոխությունների:

Անշուշտ, վիճաբանող երկու կողմներ առասում էին, թե ինչ ցույց կտան բուն իսկ առաջիկա իրադարձությունները: Դրանք պահպեսին 1943 թ. հուլիսի 5-ին գերմանական զորքերի հվոր խմբավորումների լայնամասշտար հարձակմամբ: Նրանց առջև որոշակի խնդիր էր դրված. բանակների «Հարավ» խումբը Խարկովից հյուսիս գտնվող շրջանից և «Կենտրոն» խումբը Օրյոլից հարավ գրտ-

<sup>8</sup> И. Х. Баграмян. Моя воспоминания, с. 506:

<sup>9</sup> Նույն տեղում:

նըփող շրջանից, միաժամանակ հարավից և հյուսիսից հարվածելով, պետք է շրջապատեին և ոչնչացնեին Կուրսկի հուսատի շրջանում գտնվող խորհրդային զորքերը: Այս օպերացիան ստացել էր «Ճիտադել» (միջնաբերդ) կողանունը:

Սլավեցին կատաղի մարտեր, որոնց պատահում էր, միաժամանակ յուրաքանչյուր կողմից մասնակցում էին մինչև մեկուկես հազար տանկեր: Անտեսություն իր մեծ կորուստները՝ հակառակորդը գրոհի էր նետում նորանոր ուժեր: Նրան հաջողվեց խորհրդային զորքերի դիրքեր միտրճել՝ Կուրսկի աղեղի հյուսամասաւում մինչև 10—12 կմ, իսկ հարավային դիմամասաւում՝ Պրոխոռովիկայի ուղղությամբ՝ մինչև 30—35 կմ: Ինչպես և սլավակորել էր խորհրդային իրամանատարությունը, պաշտպանական մարտերում ուժաւագու աներով հակառակորդի հարձակողական ուժերը՝ մեր զորքերն անսան հակահարձակման ինչպես Կուրսկի ելուստի հյուսիսում, այնպիս էլ հարավում:

Բաղրամյանի 11-րդ գվարդիական բանակի հակահարձակումն այնքան հաջող էր ծագալիում, որ անգամ Գերագույնն ինքը ուշադրություն դարձրեց դրան: Այս կապակցությամբ Բաղրամյանը գրում է. «Հուլիսի 14-ի երեկոյան բանակի դիտավետում գտնվող իմ բլինդած զանգահարեց Գերագույնը: Ըստրիավորելով հաջողության առթիվ՝ նա հարցուց է զարգանում հարձակումը: Լսելով իմ հակիրճ զեկույցը՝ Ի. Վ. Ստալինն արև որոշ դիտողություններ, այնուհետև ասաց. «Զեր հարձակումը ամառային մարտարշավում առաջինն է: Ռոկոսովսկու վիճակն արդեն թեթևացավ, և նա շուտով հարված կիացնի: Գլխամարտը արված է. մարտերի ընթացքում բնելում է տեղի ունեցել: Նկատի ունեցեք, որ ձեր հետևից խոշոր ռեզերվներ են գալու: Հետագա հաջողություններ եմ ցանկանում»<sup>10</sup>:

Հուլիսի 19-ի դրությամբ 11-րդ գվարդիական բանակի զորքերը առաջնային՝ 70 կմ խորանարդ հակառա-

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 523:

կորդի օրյույան ռազմահենադաշտ և սպառնալով նրա 2-րդ տանկային և 9-րդ բանակների հաղորդակցման ուղիներին: Յոթերորդ օրվա վերջում Բաղրամյանի բանակի հարձակման գոտին ընդլայնվեց մինչև 120 կմ: Բաղրամյանի բանակ ժամանեց Իլյա Էրենբուրգը, որը

ի հանձնման-ընդունման հետ կապված բոլոր գործողությունների կատարումից հետո ռազմաճակատների երկու հրամանատարները վճռեցին հեռախոսով այդ մասին վեկուցել Գերագույնին: Նախ վեկուցեց Վ. Սոկոլովսկին, այնուհետև լսափողը վերցրեց Բրյանսկի ռազ-



Հ. Բաղրամյանը 742-րդ մոտոհրաձային գնդի ժողովում գրոհից առաջ: Տարեթիվը հայտնի չէ:  
Լուսանկարի հեղինակն է հազարի մասնակիցներից մեկը:  
(Հայաստանի պատմության թանգարան, լուսանկար հմ. 13230): Տպագրվել է առաջին անգամ

վեկուցեց բանակի հրամանատարին, որ ուզում է սեփական աշխով տեսնել, «թե ինչպես են ճողապրում ֆրիցները»<sup>11</sup>:

Կապված ռազմաճակատի այս ուղղության վրա տեսի ունեցած իրավիճակի փոփոխության հետ՝ հուլիսի 29-ին 11-րդ գվարդիական բանակը Արևմտյան ռազմաճակատի կազմից փոխադրվեց Բրյանսկի ռազմաճակատի կազմի մեջ: Այդ փոխադրումը կատարվեց 11-րդ գվարդիական բանակի շտաբում: Զորքե-

մաճակատի նոր հրամանատար Մ. Պոպովը: Երբ վերջինս ավարտեց իր վեկույցը, համկարծ լսափողը մեկնեց Բաղրամյանին՝ յածրածայն ասելով. «Թեկ հետ խոսելու է Գերագույնը, նրան նվանով անվանիր, դա նրա կեղծանունն է»:

Ստավինի վրույցը Բաղրամյանի հետ սղագրական ճշգրտությամբ վերարտադրված է վերջինիս հուշերում: Մենք այն նույնությամբ մեջբերում ենք պյատեղ:

«Հուզմունքով վերցնում եմ լսափողը:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 527:

—Բարեւ ձեզ, ընկեր Խվանուի: Ձեզ լսում է գեներալ Բաղրամյանը:

—Բարեւ ձեզ, ընկեր Բաղրամյան,— լսեցի լավ ծանոթ ձայնը: —Ինչպես եք գնահատում ձեր բանակի հարձակումը գերմանացիների օրյուշան ռազմահենադաշտի վերացման օպերացիայում: Կարո՞ղ ենք մենք արդյոք մոտ ժամանակներս ակնկալել օպերացիայի խաջող ավարտ:

—Ընկեր Խվանով, —պատասխանեցի ես, —տասնմեկերորդ գվարդիականը լուրջ հաջողությունների հասավ: Ընդհանուր առմամբ, հակառակորդի օրյուլյան խմբավորման ոչնչացման օպերացիան հաջող է զարգանում: Բայց այն ավարտելու համար մեզ անհրաժեշտ է շտապ համալրում:

—Որքա՞ն է ձեզ հարկավոր և ու՞՞ պետք է ուղարկել:

Ես արագ մոտավոր հաշիվ արեցի, թե որքան համալրում է հարկավոր տասներկու հրաձգային դիվիզիաներին:

—Քանչորս հազար մարդ: Խընդրում եմ կարգադրել նրանց ուղարկել Կովել կայարան:

—Որինեմ դուք, ընկեր Բաղրամյան, հաստատ համոզված եք, որ շուտով օպերացիան հաջող կավարտվի:

—Իհարկե, ընկեր Խվանով: Բայց դրա համար, կրկնում եմ, համալրում է հարկավոր»<sup>12</sup>:

Բաղրամյանը նշում է, որ կրկնությունը ակնհայտորեն դուր չեկավ Գերագույնին, և նա, թողնելով բարյացակամ տոնը, դժկամուրյամբ ասաց. «Ընկեր Բաղրամյան, չէ՝ որ մենք այսուեղ ամենայն լրջությամբ կրաղվում ենք գործերով: Ասվեց ձեզ, որ համալրումը կլինի: Հենց այսօր Շատենկոն այդ մասին կհայտնի ձեզ: Հաջողություն եմ ցանկանում»<sup>13</sup>:

Այս խոսքերով Ստոալինն ամսարենք վրույցը: Նույն օրը երեկոյան Բաղրամյանին զանգահարեց Շատենկոն, որը ռազմակայանում վրաղվում էր գորքերի համալրման և ռեզերվի կազմակորման հարցերով, և հայտնեց, որ համալրումը

տեղ հասնելու ժամկետացանկի համաձայնեցման համար իր մարդիկ հույսի 30-ի առավոտյան կինեն Բաղրամյանի մոտ: Հովհաննես Բաղրամյանն իր հուշերում նշում է, որ «բազմահազարանոց համալրման այսքան օպերատիվ հատկացումը և տեղ հայցնելը չափազանց կարեղոր դեր խաղացին օպերացիայի հաջող ավարտման գործում»<sup>14</sup>:

Գերագույնը բարձր գնահատեց Բաղրամյանի ծառայությունը Կուրսկի ճակատամարտում: Նրան շնորհվեց նոր կոչում՝ գեներալ-գնդապետի, և նա պարգևատրվեց Սուվորովի 1-ին աստիճանի պորագարական շքանշանով:

1943 թ. հոկտեմբերի սկզբին Բաղրամյանն շտապ կանչվեց ռազմակայան: Գլխավոր շտաբում նրան ընդունեց լըտարի պետի տեղակալ գեներալ Անտոնովը: Ընդհանուր գծերով Բաղրամյանին ծանոթացնելով Բելոռուսական օպերացիայի պյանին՝ Ալեքսեյ Խննոկենտի կիշը նրան հայտնեց, որ հենց այդ օրը երեկոյան իրենք Ս. Ս. Շտեմենվոյի հետ երեքով պետք է գնան Գերագույնի մոտ:

Բաղրամյանը նշում է, որ այդ հանդիպման ժամանակ Ստոալինը լսվ տրամադրություն ուներ, և նրա հետ վրույցն ընթացավ համարյա թե անքոնազբու: Տեղեկանալով, որ Բաղրամյանին ծանոթացրել են Բելոռուսական ուղղության վերաբերյալ ռազմակայանի պյանին, Գերագույնը խոսեց խորհրդագերմանական ռազմաճակատում տիրող՝ Կարմիր բանակի համար բավականին նըսպատակով ընդհանուր իրավիճակի մասին: Սակայն անմիջապես իր դժգոհությունն արտահայտեց ռազմաճակատի մի շարք հատվածներում տիրող իրադրությունից: Եվ, ինչպես գրում է զորավարը, իրեն դիմենով՝ ասաց. «Ռազմակայանում քննարկվել է 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատարին փոխելու հարցը: Որոշում է ընդունվել այդ պատասխանատու պաշտոնում նշանակելու ձեզ... Ինչպես եք դրան վերաբերյում, ընկեր Բաղրամյան»<sup>15</sup>:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 533–534:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 534:

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 545:

Բաղրամյանը պատասխանեց, որ այդ նշանակումը իր համար մեծ պատիվ է: համարում և ջանք չի խնայի ցուցաբերված վատահությունն արդարացնելու համար: Ստալինը, համաձայնության նշան անելով, շարունակեց. «Օրյոլի և Բրյանսկի շրջանում ձեր կողմից հաջողությամբ իրագործված օվերայիշան համոզում է, որ նոր պաշտոնը կիամապատասխանի ձեր ուժերին»<sup>16</sup>:

Ստալինը միաժամանակ ավելացրեց, որ որոշում է ընդունված 11-րդ գլաւորդիական բանակը փոխադրել 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի կազմի մեջ: Դա է՛լ ավելի ոգեսրեց Բաղրամյանին, և նա հավաստիացրեց Ստալինին, որ ջանք ու եռանդ չի խնայի ռազմաճակատի առջև դրված խնդիրների լուծման համար:

Նույն ոգով շարունակելով վրույցը՝ Ստալինն ասաց, որ որոշվել է 11-րդ գլաւորդիական բանակի հրամանատար նըշանակել գեներալ-գնդապետ Չիբիսովին, և հարցրեց, թե դրա մասին ինչ կարծիքի է: Բաղրամյանն ինքը: Բայց Բաղրամյանը հապալում էր: Այդ ժամանակ Ստալինը հետաքրքրվեց, թե գույն Բաղրամյանըն ինչ-որ բան ունի Չիբիսովի դեմ: Բաղրամյանը պատասխանեց, որ Չիբիսովն անկանած փորձառու հրամանատար է, բայց..., և մի փոքր լրելուց հետո ավելացրեց, որ ֆիննական մարտարշավից հետո Չիբիսովը դարձել էր գեներալ-գնդապետ, այն դեպքում, եթե Բաղրամյանն ինքը այդ ժամանակ դեռ ընդամենը գնդապետ էր: Այս հանգամանըը արդյոք չի բարդացնի նրանց փոխհարաբերությունները: Ստալինը, զգալով նոր նշանակման նրբախնդրությունը, խկույն հարցրեց, թե ում կառաջարկեր Բաղրամյանն ինքը: Բաղրամյանն առաջարկեց 3-րդ հարվածային բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Գալիցկու թեկնածությունը և բնութագրեց նրան: Գերազուշնն անմիջապես համաձայնեց, իսկ Չիբիսովին նշանակեց Գալիցկու տեղը:

Բաղրամյանն իր հուշերում, մաս-

<sup>16</sup> Նույն տեղում:

րամանորեն նկարագրելով այդ վրույցը, նշում է, որ Գերագույնը մի քանի րոպեն խորհերուց հետո և, ծխացնելով իր ծրխամորձը, մոտեցավ սեղանին ու եռանդուն սեղմեց կանչի կոճակը: Աշխատասենյակ մտավ նրա օգնական Պուակրեբիշլը: Դիմենով նրան՝ Ստալինն ասաց, որ պետք է պատրաստել ժողովրդական կոմիսարների խորհրդի հրամանագրի նախագիծ ընկեր Բաղրամյանին բանակի գեներալի կոչում շնորհելու մասին: Նա հարցրեց, թե ուսպմածակատների հրամանատարներից ել ով է գեներալ-գնդապետ: Լսելով Լենինգրադյան ռազմաճակատի հրամանատար Գովորովի ազգանունը՝ նա կարգադրեց նախագծում նըշել նաև Գովորովին: Այնուհետև, հարցնելով գեներալ Անտոնովի կարծիքը, Ստալինն առաջարկեց նախագիծ մըտնել Ս. Շտեմենկոյին գեներալ-գնդապետի կոչում շնորհելու մասին կետ: Տաս լուսե անց փաստաթուղթը պատրաստ և ստորագրված էր, և Ստալինն անձամբ շնորհագործեց ներկա գտնվողներ Բաղրամյանին ու Շտեմենկոյին նոր վինվորական կոչումների շնորհման առթիվ<sup>17</sup>:

Այսպիսով, դատելով ըստ Կուրսկի ճակատամարտի արդյունքների, Ստալինը Բաղրամյանի մեջ տեսակ ոչ միայն բանակի տաղանդավոր հրամանատարին, այլև խոշոր գորավարի տվյալներով օժտված գորապեսին: Այդ նկատառումով էլ Բաղրամյանը նշանակվեց ռազմաճակատի հրամանատար:

Բանակի գեներալ Հ. Ք. Բաղրամյանը իր նշանակման հենց հաջորդ օրը ժամանեց 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի շտաբ և իր հին բարեկամ Երյումենկոյից ընդունեց իրամանատարությունը:

Նախքան հետագա մարտական գործողությունների մասին որոշում ընդունելը Բաղրամյանն սկսեց անձամբ ծանոթանալ տեղերում տիրող իրավիճակին, եղավ ռազմաճակատի բոլոր գորամիավորումներում: Ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամ գեներալ Լեոնովիի հետ նա շրջեց ողջ ռազմաճակատը՝ լինելով նույնիսկ շատ հրագային դի-

<sup>17</sup> Տես նույն տեղում, էջ 447:

վիզիաներում: Խորը և համակողմանիորեն վերլուծելով ամբողջ իրադրությունը՝ Բաղրամյանը որոշեց առաջին հերթին վրադիմել հակառակորդի գորոդովկյան խմբավորման ոչնչացմամբ: Վիտեբսկյան ուղղության վրա, որտեղ մեր աջ թևի վորքերը բավական առաջ էին շարժվել, նրանց համար ստեղծվել էր վտանգավոր իրավիճակ: Մեր վորքերի կողմից ստեղծված ռազմահենադաշտի բկանցիք մոտ՝ Գորոդովկի շրջանում, հակառակորդը մեծ ուժեր էր կուտակել ռազմածակատի վորքերին հարված հասցընելու նպատակով: Մի մարտական հրամանում, որը ռազմածակատի նոր հրամանատարը ստորագրեց 1943 թ. նոյեմբերի 23-ին, ինդիք էր դրված ոչնչացնելու հակառակորդի այդ խմբավորումը: Սակայն եղանակային պայմանների վատթարացման պատճառով հարձակումն պավեց միայն դեկտեմբերի 13-ին:

Դեկտեմբերի 19-ին Սովինֆորմբյուրոն հայտնեց. «Վերջին օրերս 1-ին Մերձբալթյան ռազմածակատի վորքեր... հարձակման անցան Նևելից հարավ դասավորված գերմանաֆաշիստական գորքերի դեմ և ճեղքեցին հակառակորդի ուժեղ ամրացված պաշտպանական գոտին ճակատի երկայնքով մոտ 80 կմ և դեպի խորը՝ մինչև 30 կմ: Հինգ օրվա համառ մարտերից հետո մեր վորքերն ապատագրեցին ավելի քան 500 բնակավայր»<sup>18</sup>:

Հակառակորդի պաշտպանության ճեղքման և ռազմածակատի վորքերի հարձակման վարգացման ժամանակ հատկապի աշքի ընկան գեներալ Գալիյկու 11-րդ գվարդիական բանակի վորքերը: Լույս 24-ի գիշերը, բարակ սառուցյի վըրայով հայթահարելով շրային արգելքը, նրանք ներխուժեցին Գորոդովկ և մինչև առավոտ ամբողջությամբ գրավեցին այն: Զախաշիւով հակառակորդի վորքերի գորոդովկյան խմբավորումը՝ ռազմածակատի վորքերը շարունակեցին հարձակողական մարտերը վիտեբսկյան ուղղության վրա<sup>19</sup>:

<sup>18</sup> «Правда», 19 декабря 1944 г.

<sup>19</sup> Տե՛ս Կենտրալնայի արխիվ ՄՕ ՀՀՀՊ, գ. 358, օպ. 5938, ձ. 53, լ. 424.

Բանակի գեներալ Հ. Բաղրամյանի 1-ին Մերձբալթյան ռազմածակատի վորքերը գորոդովկյան օպերացիայի ընթացքում տեղանքի և նղանակի բարդ պայմաններում ապատագրեցին ավելի քան 1.200 բնակչիայր, ոչնչացրին հակառակորդի ավելի քան 60.000 վիճակու ու ապա, գերեցին 3.300 հիտլերական, գրավեցին մեծ թվով ռազմական տեխնիկա և այլ ռազմագույք<sup>20</sup>:

Դեկտեմբերի 24-ի երեկոյան Սովոկան ողջունեց 1-ին Մերձբալթյան ռազմածակատի վորքերին, որոնք ապատագրել էին Գորոդովկը: Այս օպերացիայի հաջող իրականացումը բարենպաստ նախադրյալներ ստեղծեց Վիտեբսկի շրջանում նոր հաջողություններ ձեռք բերելու՝ հետագա հարվածներ հասցնելու համար Պողոսյում և Մերձբալթիկայում գտնվող թշնամուն:

Ռազմածակատի վորքերն այդ ուղղությունների վրա շարունակում էին ակտիվ մարտական գործողությունները մինչև 1944 թ. ապրիլ ամիսը, իսկ այնուհետև, ռազմակայանի ցուցումով, պաշտպանության անցան և սկսեցին նախապատրաստվել ամառային հարձակողական մարտերին:

Գերագույն գլխավոր հրամանատարության ռազմակայանը պլանավորել էր 1944 թ. ամռանն իրականացնել մի խոչըն օպերացիա Բելոռուսիայի ապատագրման նպատակով: Օպերացիան ստացել էր «Բագրատիոն» կողանունը: Նրանում բավական կարևոր դեր էր հատկացված 1-ին Մերձբալթյան ռազմածակատին: Հաշվի առնելով այս հանգամանը՝ Գերագույն գլխավոր հրամանատարի տեղակալ Ժուկովը և գլխավոր շտաբի պետ Վասիլեսկին որոշեցին նախքան ռազմակայանի նիստում այդ պլանի ըննարկումը դրան ծանոթացնել 1-ին Մերձբալթյան ռազմածակատի հրամանատարին և պարզել նրա անձնական կարծիքը: Երկու մարշալներն էլ լավ էին հիշում ռազմակայանի նիստում Կուրսկի ճակատամարտի Օրյովյան օպերացիայի

<sup>20</sup> Տե՛ս նույն տևողում, ց. 2074, գ. 829, թթ. 13—14:

պանի քննարկման պատմությունը, երբ հակառակ Արևմտյան ու Բյունակի ռազմաձևատների հրամանատարների կարծիքի Ստոպինն ընդունեց Բաղրամյանի տեսակետը, ինչը լիովին արդարացավ ինտագա գործողությունների ընթացքում: Ուրեմն ավելի լավ չէ՝ Բաղրամյանին նախապես ծանոթացնել «Բագրատիոն» օպերացիայի պլանին, մանավանդ որ նա այժմ ռազմաճակատի հրամանատար էր, որի վրա էր դրվում մի պատասխանատու խնդրի կատարումը:

Մարշալները ջերմ դիմավորեցին Բաղրամյանին և անմիջապես գործի անցան: Ժուկովը, Բաղրամյանին քարտեզի մոտ հրավիրելով և «Բագրատիոն» օպերացիայի պլանը ներկայացնելով, ասաց, որ հաջորդ օրը Բաղրամյանի մասնակցությամբ Գերագույն գլխավոր հրամանատարին են վեկուցելու օպերացիայի մտահացումը և 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերի խնդիրները: Խակ ինչպես է գնահատում Բաղրամյանը օպերացիայի նման կառուցումը:

Բաղրամյանը, մեծ հավանություն տալով օպերացիայի մտահացացմանը, նրան համարձակ ու վճռական նպատակներին, միաժամանակ մի շատ կարեւոր դիտողություն արեց: Դա հետեւյալն էր: «Բագրատիոն» օպերացիայի մտահացմամբ 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը պետք է ոչ միայն մասնակցեն թշնամու բանակների «Կենտրոն» խմբի հյուսիսային թևի ջախջախմանը, այլև Բելոռուսիայում հակառակորդի կենտրոնական խմբավորման խոր շրջառում կատարենին հյուսիս-արևմուտքի: Բաղրամյանը լիովին համովագած էր, որ այդ դեպքում հակառակորդի բանակների «Հյուսիս» հկոր խումբը կարող է հյուսիսից ուժեղ հարված հասցնել 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերին թիվունքից և լայն ձգված թևից: Ժուկովը և Վասիլևսկին շատ ուշադիր լսում էին Բաղրամյանին՝ գլխով իրենց համաձայնությունը տալով նրա փաստարկներին, և վերջում հարցրին, թե ինչ է առաջարկում Բաղրամյանը: Վերջինս արդեն ուներ պատրաստի պատասխան

և ամենայն համոզվածությամբ ներկայացրեց հյուսիսից հակառակորդի ուժեղ հարվածի կասեցման իր կողմից մշակված արդյունավետ միջոցները: Հաջորդօր ժուկովը, ներկայացնելով Գերագույնին օպերացիայի պլանը, նշեց, թե ինչ ծցումներ է նրանում կատարել Բաղրամյանը: Ստոլինը բարյացակամորեն նայեց Բաղրամյանին և մի քանի անգամ շարժեց գլուխն ի նշան համաձայնության ու գոհունակության<sup>21</sup>: Առաջ անցնելով՝ նշենք, որ իրադարձությունների հետագա ընթացքը հաստատեց Բաղրամյանի մտավախտության հիմնավորությունը, և նախապես ձեռնարկված միջոցառումների շնորհիվ վտանգը վերացվեց:

«Բագրատիոն» օպերացիայի պլանով 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերի առջև խնդիր էր դրվում շրջապատելու և ոչնչացնելու հակառակորդի վիտերսկյան խմբավորմը, որից հետո հարձակում զարգացնելու դեպքի Լիտվայի և հարավ-արևելյան Լատվիայի սահմանները այն հաշվով, որ այդ զորքերը 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի զորքերի հետ համագործակցությամբ մասնակցեն հակառակորդի բանակների «Կենտրոն» խմբի ջախջախմանը և միաժամանակ հիմնական ուժերից կարեւոր «Հյուսիս» խմբի հարավագայուղը Արևմբայության 18-20 կմ հեռավորության վրա: Որոշում կայացվեց արագացնելու հարձակումը, ընթացքից հաղթահարելու գետը և ռազմահենադաշտ գրավելու: Արդեն կեսօրին գեներալ-լեյտենանտ Ի. Չիստյակովի 6-րդ գվարդիական բանակի զորքերը հասան գետին և սկսեցին ամբողջ ստորաբաժանումներով անցնել մյուս ափի<sup>22</sup>: Լսելով Բաղրամ-

<sup>21</sup> Տե՛ս Ի. Խ. Բագրամյան. Վելիկու նարода սկզբանը. Տարբերակ 6. Եղանակ 36-37.

<sup>22</sup> Տե՛ս «Վելիկա Օտեղաւունա война СССР-ի 1941-1945», կրակա իշտակա 1967, տ. 345-349.

յանի գեկույցը Արևմտյան Դվինայի անցումն սկսելու մասին՝ գլխավոր շտարի պետ Վասիլևսկին զգուշացրեց, որ վերջնական նպատակին՝ հակառակորդի վիտերսլյան խմբավորման շրջապատմանը, հասնելու համար հույժ կարենոր է, որ գետը հաղթահարեն գեներալ Բելոբրոդովի աշաթեյան գորամիավորումները։ Այս խոսակցությունից հետո Բաղրամյանը բոլոր միջոցները ձեռնարկեց հարձակման գլխավոր ուղղության վրա հարվածի ուժը մեծացնելու համար։ Հունիսի 25-ին գեներալ Բելոբրոդովի բանակի գորքերը երկու կորպուսով հաղթահարեցին Արևմտյան Դվինան և ատեղեցեցին հակառակորդի վիտերսլյան խմբավորման լրիվ շրջապատման ռեալ սպառնալիք։ Սա գերմանացիների համար այնքան անսպասելի էր, որ իիտեղյան գեներալ Կ. Տիգելսկիի հետագայում այդ իրադարձության վերաբերյալ գրեց. «Հատկապես տհաճ էր Վիտերսլյու դեպի հյուսիս-արևմուտք իրագործված հարձակումը, քանի որ այն, ի տարբերություն մնացյալ ռազմաճակատում հասցած հարվածների, միանգամայն անսպասելի էր՝ խոցելով ռազմաճակատի առանձնապես թույլ պաշտպանված հատվածը օվերատիվ առումով վճռական ուղղության վրա»<sup>23</sup>։

Այդ օրերին Բաղրամյանին երկու անգամ զանգեց Գերագույնը և հետաքրքից գետանցման ընթացքի մասին։ Երբ Բաղրամյանը վեկուցնեց, որ ռազմաճակատի գորքերը հարձակողական մարտեր են մղում արդեն գետի մյուս ափին, Ստալինն իրեն հատուկ կարճաբանությամբ գոհունակություն հայտնեց և հետագա հաջողություններ ցանկացավ։

Արևմտյան Դվինայի համար մարտերի ելքը վերջնականապես որոշվեց հուլիսի 25-ի երեկոյան, երբ Շիտովակովի 6-րդ գվարդիական բանակի գորքերը ոչ միայն պահեցին գրավված ռազմահենադաշտը, այլև Էտապես ընդարձակեցին ու խորացրին այն և շարժվեցին Բելոբրո-

<sup>23</sup> K. Типпельскирх. История второй мировой войны (перевод с немецкого). М., 1956, с. 443.

դուի գորքերին ընդառաջ՝ դրանով իսկ բոլորելով թշնամու վիտերսլյան խմբավորման օղակը։ Հաջորդ օրը Մոսկվան ողջունեց Վիտերսլյան ապահովողներին։

Այս փայլուն օպերացիայի արդյունքն այն եղավ, որ հուլիսի 25-ի գրությամբ լրիվ ապատագրվել էին Բելոբրուսիայի հյուսիս-արևմտյան շրջանները և Բաղրամյանի 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի գորքերը ընդհուպ մոտեցել էին Լատվիայի և Լիտվայի սահմաններին։ Բնութագրելով Բելոբրուսական օպերացիայում 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի մարտակատի մարտական գործողությունները՝ Սովինֆորմբյուրոն իր 1944 թ. հուլիսի 25-ի հատորդագրության մեջ հայտնում էր, որ Բաղրամյանի գորքերը մեկամյա հարձակողական մարտերում ոչնչացրել են հակառակորդի 162 ինքնաթիռ, 396 տանի ու ինքնագնաց իրանթ, 552 իրանոթ և 3.946 ավտոմեքենա։ Թշնամին կորցրել էր սպանված 56.610 զինվոր ու սպա։ Գերեզմանվել էր 8.249 մարդ, վերցվել էր հակայական ռազմապատճեն։<sup>24</sup>

Բելոբրուսական օպերացիայում 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի գորքերի ձեռք բերած աշքի ընկնող հաջողությունների և անձնական արիության համար բանակի գեներալ Հովհաննես Քրիստափորի Բաղրամյանին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. հուլիսի 29-ի հրամանագրով շնորհվել է նոր հըրդային Միության հերոսի կոչում։

Հիտլերյան հրամանաստարությունը, շանալով ցանկացած գնով պահել Մերձբալթիկան, ամեն կերպ ուժեղացնում էր իր գորքերի այստեղ գտնվող խմբավորումը, մասնավորապես՝ ի հաշիվ Ֆինլանդիայի ու Լենինգրադի մոտակայքի իր ուժերի մի մասի տեղափոխման։ Իսկ այդ խմբավորումը, նախ, դեպի իրեն էր գրավում խորհրդային բանակի զգալի ուժեր, երկրորդ՝ ծածկապաշտպանում էր Լատվիայի ու Լիտվայի նավահանգիստները՝ ստեղծելով մի յուրահատուկ կամուրջ Գերմանիայի Մերձբալթիկա։

<sup>24</sup> Տե՛ս «Պրավդա», 25 հուլիս 1944 թ.

Բաղրամյանի զորքերը, ճեղքելով հակառակորդի ուժեղ պաշտպանական գոտին, 1944 թ. հուլիսի երկրորդ կեսին դուրս եկան Շյաուլյայի շրջան, իսկ ուստի ականակատի տանկային միավորումները, հաղթական արշավ կատարելով դեպի ծով, օգոստոսի առաջին օրերին գրավեցին Ելգավան ու Տուլիումը: Մերձբալթիկայում տեղաբաշխված գերմանաֆաշիստական զորքերի

Պատերազմի ավարտական շրջանում Բաղրամյանի զորավարական գործունեությունն անսավ Խորհրդային Միության մարշալ Ա. Ս. Վասիլևսկու հետ սերտ շփման ու մարտական համագործակցության մեջ: Խորհրդային վինված ուժերի գլխավոր շտաբի պետը՝ որպես Գերագույն գլխավոր հրամանատարության ուսպմակայանի ներկայացուցիչ, զբաղվում էր բնուուսական ուղղության



1-ին Մերձբալթյան ուսպմաճակատի հրամանատար բանակի գեներալ Հ. Բաղրամյան  
(Ա. Խ. Բագրամյան. Փոտոալբոմ» գրքից)

համար կրիտիկական իրավիճակ ստեղծվեց: Հակառակորդը օգոստոսի 16-ին մեծ ուժերով հակահարձակում ձեռնարկեց Բաղրամյանի զորքերի դեմ, բայց այն ձախողվեց: Գերմանական զորքերը մեծ կորուստներ կրեցին, ինչը հեշտացրեց Ռիգայան օպերացիայի իրավործությը:

1945 թվականը նշանավորվեց Կարմիր բանակի նվազագույն հաղթանակներով, որոնց մեջ գլխավորներից մեկն էր Արևելյան Պրուսիայում տարած հաղթանակը: Բանակի գեներալ Բաղրամյանը մեծ ներդրում ունեցավ այդ հաղթանակում:

Իրա գործող ուսպմաճակատների մարտական գործողությունների կողորդինացմամբ: Եվ երբ 1945 թ. փետրվարին գոհիվեց 3-րդ Բելոռուսական ուսպմաճակատի հրամանատար Ի. Զեռնյախովսկին, այդ ուսպմաճակատի հրամանատարությունը հանձնվեց Վասիլևսկուն: Բընութագրելով ուսպմաճակատում ստեղծված իրադրությունը՝ Վասիլևսկին գրել է. «Քյոնիգսբերգի մոտ իրադրությունն այդ ժամանակ բավականին բարդ էր: Մինչ 3-րդ Բելոռուսականը տեսական մարտեր էր վարում հակառակորդի հայլաբերգյան խմբավորման ոչնչացման նպատակով, 1-ին Մերձբալթյանը գոր-

ծում էր Զեմլյանդյան թերակղզում և բուն իսկ Քյոնիգսբերգի մոտակայքում: Մեր ուժերը չփոշիացնելու նկատառումով Գերագույն գլխավոր հրամանատարությունը փետրվարի 17-ին կարգադրություն արեց 1-ին Մերձբալթյան ռազմակատի հրամանատար Հ. Բ. Բաղրամյանին ամուր պաշտպանություն կազմակերպելու Քյոնիգսբերգի շուրջը՝ հիմնական ուժերը կենտրոնացնելով հակառակորդի զեմլյանդյան խմբավորումը փետրվարի 20-ից մինչև 27-ը ոչընչացնելու համար: Սակայն ֆաշիստները կանխեցին մեր զորքերի հարձակումը: «Զեմլյանդ» օպերատիվ խումբը համարելով Կուռլյանդիայից ծովով տեղափոխած զորքերով՝ հիտլերականները քյոնիգսբերգյան խմբավորման աւաշրջակավան նպատակով փետրվարի 19-ին երկու տնապասելի հանդիպակաց հարված հասցրին՝ Քյոնիգսբերգից ու Զեմլյանդյան թերակղզուց»<sup>25</sup>:

Իրադրության փոփոխման կապակցությամբ Գերագույն գլխավոր հրամանատարության ռազմակայանը դեռևս փետրվարի 21-ին ընդունեց մի որոշում, որով Արևելյան Պրուսիայում գործող բոլոր խորհրդային զորքերը տրվում էին 3-րդ Բելոռուսական ռազմաճակատին՝ միասնական դեկավարում ապահովելու նպատակով: «Համաձայն այդ որոշման 1-ին Մերձբալթյան ռազմաճակատը 1945 թ. փետրվարի 24-ի ժամը 24-ին լուծարվում էր, իսկ նրա զորքերը, վերանվանվելով զեմլյանդյան խմբավորում, մուցում էին 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի կազմի մեջ: Բանակի գեներալ Հ. Բ. Բաղրամյանը նշանակվում էր զորքերի զեմլյանդյան խմբավորման հրամանատար և միաժամանակ 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի հրամանատարի տեղակալ»<sup>26</sup>, գրում է Վասիլևսկին:

Վասիլևսկին նշում է, որ Քյոնիգսբերգի գրոհը նախապատրաստվում էր զորքերի զեմլյանդյան խմբավորման հը-

<sup>25</sup> A. M. Vasilevskii. Дело всей моей жизни. М., 1974, сс. 486–487.

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 487:

րամանատարության ու շտաբի կողմից՝ բանակի գեներալ Հ. Բ. Բաղրամյանի գլխավորությամբ: 1945 թ. մարտի կեսերին 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի հրամանատարությունը զորքերի զեմլյանդյան խմբավորման հրամանատարության հետ համատեղ, հանգամանորեն վերլուծելով այդ խմբավորման հրամանատարության ու շտաբի կողմից մշակված պլանը, այն որպես Քյոնիգսբերգի գրոհի և հակառակորդի զորքերի արևելյան գրոհի հիմք ընդունեց և նրանում որոշ աննշան փոփոխություններ կատարելուց հետո ներկայացրեց ռազմակայան<sup>27</sup>:

Քյոնիգսբերգի գրոհի պլանը ռազմակայանը հաստատեց գրոհն ակսվելուց անմիջապես առաջ: Մեր երեստանին ու ավիացիան չորս օր շարունակ ավերում էին ամրոցի երկարածամկետ պաշտպանական կառույցները: Ապրիլի 6-ին, երբ եղանակը լավացավ, ռազմաճակատի զորքերը ձեռնարկեցին Քյոնիգսբերգի վճռական զրոհը: Ձշնամին համառորեն դիմադրում էր՝ այսուն տեղափոխելով հետևակային և հակառանկային զորամասեր: Բայց՝ ապարդյուն: Ապրիլի 9-ի առավոտից մեր 5.000 հրանոթներ ու ականանեաներ, 1.500 ինքնաթիւներ զանազան հարված հասցրեցին ամրոցին: Նույն օրը ամրոցի կայագորքը անձնատուր եղավ: Քյոնիգսբերգի համար մոված մարտերում մեր զորքերը հսկայական կորուստներ պատճառեցին թշնամուն և գերենվարեցին ավելի քառ 90 հազար զինվոր ու սպա, այդ թվում նաև ամրոցի պարետ հետևապորի գեներալ Լաշին<sup>28</sup>:

Քյոնիգսբերգի գրոհի հաջող ավարտից հետո մարզավ Վասիլևսկին, ձգտելով խուսափելու ավելորդ արյունահեռությունից, ապրիլի լույս 12-ի գիշերը վերջնագիր ներկայացրեց Զեմլյանդյան թերակղզում գտնվող ֆաշիստական գոր-

<sup>27</sup> Տես նույն տեղում, էջ 491–492:

<sup>28</sup> Տես «Վеликая отечественная война Советского Союза 1941–1945», краткая история, сс. 467–468.

թերին, սակայն վերջիններս այն չլողունեցին: Ուստի ապրիլի 13-ին խորհրդային գորքերին հրաման տրվեց՝ «Հարձակվել և ոչնչացնել հակառակորդին»: Ֆաշիստական հրամանատարությունը, իր գորքերի մնացորդները հետ բաշելով Պայառութերակովի, հույս ուներ այնտեղ ամրանալ: 11-րդ գվարդիական բանակի առջև ինդիր դրվեց հարձակիվ և ծով նետել թշնամու գորքերի մնացորդները: Բարյամյանը գրում է. «Մարշալ Վասիլևսկին ինձ կարգադրեց անբացակայելի կերպով գտնվել 11-րդ գվարդիական բանակի հրամանատարական կետում, հսկել նրա առջև դրված խնդիր կատարման ընթացքը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև օգնել Գալիցյուն գորքերի դեկավարման գործում»<sup>29</sup>:

11-րդ գվարդիական բանակի հարձակումը հաջող էր ընթանում: Ապրիլի 25-ի երկրորդ կետին այստեղ ժամանեց և Վասիլևսկին ինքը: Շնորհավորելով Բարյամյանին ու Գալիցյուն հաջողությունների առջիվ՝ Վասիլևսկին մի քանի ցուցում տվեց ֆաշիստական գորքերի մնացորդների վերջնական ջախչախման համար բարձիական նավատորմի դեսանտային խմբերի հետ համագործակցության կազմակերպման վերաբերյալ: Հաջորդ օրը Գալիցյուն գվարդիականները նավաստինների դեսանտային խմբերի աջակցությամբ լրիվ ոչնչացրին հակառակորդի խմբավորումները Պայառութերակովում:

Այդ օրը Բարյամյանը հրավիրվեց ռազմաճակատի շտաբ, որտեղ Վասիլևսկին նրան հայտնեց, որ ինքը Ստալինի կարգադրությամբ Մուկվա պիտք է մեկնի, իսկ Բարյամյանը նշանակվել է ռազմաճակատի հրամանատար: Նա հայտնեց նաև, որ հիմնական խնդիրն է ամենակարծ ժամկետներում ավարտել հակառակորդի գորքերի վեմլանդյան խմբավորման մնացորդների ջախչախումը<sup>30</sup>: Զերծ հրաժեշտ տպով Բարյամյանին ու շտաբի պետ գեներալ Ա. Պոկ-

<sup>29</sup> Ա. Խ. Եգրամյան. Մոи воспоминания, с. 655.

<sup>30</sup> Տես նույն տեղում, էջ 655:

րովակուն՝ Վասիլևսկին մեկնեց Մուկվա: Բարյամյանը այն բոլոր օպերացիաներում, որոնց մասնակից է եղել, ոչ միայն ցուցաբերում էր գորավարական արտակարգ ընդունակություններ, այլև դրանորում էր անձնական արիությունը ու քաջությունը: Նա միշտ անձամբ գտնվում էր ռազմաճակատի առավել վտանգավոր ու վճռորոշ հատվածներում և ուղղություններում, հմտորեն դեկավարում էր գորքերի մարտական գործողությունները: Հայրենական մեծ պատերազմի եկրափակիչ օպերացիաներում ունեցած մեծ վաստակի համար բանակի գեներալ Հ. Ք. Բարյամյանը պարզեատրվեց Սովորովի 1-ին աստիճանի երկրորդ շրանշանով:

Պատերազմից հետո Հովհաննես Բարյամյանը ինը տարի Մերձբալթյան վինվորական օկրուգի գորքերի հրամանատարն էր: Այս պաշտոնում նա հարգանք ու ժողովրդականություն էր վայելում ոչ միայն օկրուգի հրամանատարական կազմի ու վինվորների, այլև մերձբալթյան հանրապետությունների ողջ բնակչության շրջաններում: 1954 թ. նա նշանակվեց ԽՍՀՄ ՊՆ գլխավոր տեսուչ, իսկ մեկ տարի անց՝ ԽՍՀՄ պաշտպանության նախարարի տեղակալ: 1955 թ. մարտի 11-ին Բարյամյանին շնորհվեց Խորհրդային Միության մարշալի բարձր կոչումը:

Հետագայում Բարյամյանն սբադից է գլխավոր շտաբի վինվորական ակադեմիայի պետի, պաշտպանության նախարարի տեղակալի և ԽՍՀՄ վինվածութերի թիկունքի պետի պաշտոնները, գլխավորել է ԽՍՀՄ պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչների խումբը:

Հատկանշական է, որ այդ պատասխանատու պաշտոններում էլ Հովհաննես Բարյամյանն իրեն հավատարիմ էր մնում. աշխատանքում թույլ չեր տախս նվազագույն իսկ թուլացում, միշտ պահանջկուտ էր իր և ենթակաների նվատմամբ, ձգված ու նոանդուն էր, մարդկանց հետ հարաբերություններում՝ մըշտապես բարեկիրթ, իրեն հատուկ ին-

լամուռությամբ և օպերատիվությամբ լուծում էր ծառայողական հարցերը՝ խորանարդության մեջ: Այս ստենն է՛ ավելի էր բարձրացնում նրա հեղինակությունը բանակում ու նավատորմում:

Հետպատերազմյան տարիների մեծ ծառայությունների համար Հովհաննես Բարյամյանը պարզևատրվել է մի շարք կատավարական պարզևներով և արտասահմանյան երկրների բազմաթիվ շրջանշաններով: Ծննդյան 80-ամյակի առթիվ նրան երկրորդ անգամ շնորհվել Խորհրդային Սիոն թյան հերոսի կոչում:

Հետպատերազմյան տարիներին, չնայած ծառայողական գործերով մեծ վրադապությամբ, Հովհաննես Բարյամյանը վարում էր ակտիվ հասարակական-քաղաքական ու ուսումնակիտական գործունեություն՝ իր էական լուման ներդելով Հայրենական մեծ պատերազմի փորձի ընդհանրացման և դաժան մարտերում ֆաշիզմը ջախջախած և աշխարհը դարչնագույն ժանտախտից փրկած խորհրդային ժողովրդի անօրինակ սիրազգործությունների խմասուավորման ու գնահատման գործում:

Փառապանծ մարշալի գրչին են պատկանում բազմաթիվ գրքեր և ուսումնասիրություններ, ինչպիսիք են «Խորհրդային ժողովրդի մեծ հայրեանակներ», «Այսպիս մենք հասանք հաղթանակի», «Մարտական փառք», «Մեծ հայրանակի ճանապարհին», «Իմ իուշերը», «Մեծ ժողովրդի որդիները» աշխատությունները: Այս ստեղծագործությունները մտել են ուսումնական գրականության համաշխարհային գանձարան, դրանցից շատերը թարգմանվել են օտար լեզուներով և մեծ հետաքրքրություն և սուածացրել արտասահմանյան ընթերցողների շրջանում:

Զի կարելի չնշել նաև Բարյամյանի անգնահատելի դերը թուրքական հորդաների դեմ հայ ժողովրդի մղած ապատագրական պայքարի առանձին, սակայն ուսումնասիրված դրվագներից լուսարանման գործում: Այստեղ մենք նկատի ունենք երկու շատ կարենոր հիմնահարցեր, որոնք առանձին պատմարան-

ների կողմից լուսաբանվել են ոչ օբյեկտիվորեն, միակողմանի, պատմական փաստերի կոպիտ խեղաթյուրումով: Մենք նկատի ունենք Անդրանիկին և հայ ժողովրդի համար բախտորոշ Սարդարապատի ճակատամարտին նրա տրված գնահատականները:

Իր հուշերում, նկարագրելով Կովկասյան ուզմաճակատում ստուրծված իրադրությունը և, իր իսկ խոսքերով ասած՝ «հայ ժողովրդի համբանդիանուր ճանաչում գտած հերոս» Անդրանիկի հետ իր միակ հանդիպումը, մարշալն ասել է. «Հայության ամենալայն խավերը Անդրանիկի մասին պահպանել են անհերքելի, հաստատուն կարծիք, որ նա իրոք իր ուղ կյանքը նվիրաբերել և անձնապոհ, հերոսությամբ լի պայքարին՝ ուղղված իր հարազատ Արևմտյան Հայատանի ապատագրմանը Օսմանյան թուրքիայի հետադիմական, շովինիզմի ու կրոնական անհանդուրժության բույնով տողորված կառավարող շրջանների բազմագայլան բռնատիրությունից: Բայց սաած, այս սրբազն պայքարն էլ հենց դարձավ նրա հիմնական քաղաքական հավատամքը: Հենց այս ապնիկ ասպարեզում էլ Անդրանիկը ձեռք բերեց լեզենդար ժողովրդական հերոսի խկական փառը: Այսպիսին էին նրան ճանաչում հայերի մի քանի սերունդներ, այսպիսին էլ նա ընդիմիտ մնաց ժողովրդական հիշողության մեջ:

Պետք է ընդգծեմ, որ, չնայած Անդրանիկի նվիրվածությանը ապգային-ազգատագրական գաղափարներին, հանուն իր ժողովրդի լուսավոր ապագայի մղված պայքարում նրա դրաւորած անօրինակ հերոսությանը, չի կարելի կարծիք, թե նա իր ընդհանուր առմամբ առաջադիմական գործունեության մեջ լիովին ապահովված էր քաղաքական կարգի սիսակաների կատարումից: Բայց ես կարծում եմ, որ եթե նույնիսկ Անդրանիկը իր գործունեության ինչ-որ շրջանում, հայության եթեն հաշվի առնենք, որ այն ընթանում էր բարդ, հակասական քաղաքական իրավիճակում, թույլ է տվել իր սեփական քաղաքական գծից ինչ-որ ցա-

վալի շեղում, ապա այդ դեպքում էլ նա հայ ժողովրդի ամենալայն կանգվածների աշքում չի դադարել իր հարազատ Արևմտյան Հայաստանի պագային-ապատագրական պայքարի պայծառ լեզենդար հերոս լինելով»<sup>31</sup>:

Այս գնահատականը շատ թանկ է մեր ժողովրդի համար, հայերի ալգային-ապատագրական պայքարի պատմությունն ուսումնասիրող պատմաբանների համար:

Մարշալ Բաղրամյանը նոր խոսք է ասել նաև հայ ժողովրդի պատմական ճակատագրում Սարդարապատի ճակատամարտի դերի ու նշանակության գընահատման հարցում\*: Հայ ժողովրդի ճակատագրում այդքան վճռորոշ դեր խաղացած Սարդարապատի ճակատամարտը երկար ժամանակ եղել է հայ ժողովրդի պատմության շեացված հզերից մեջը: Քանի որ հայոց զորքերի հրամանատարներ են եղել ինն ցարական բանակի հայ և ոռւս գեներալներ, ապա պատմաբանները, գերի մնալով անձի պաշտպանների ժամանակ գոյություն ունեցած իին գնահատականներին ու մոտեցումներին, չին հանդգնում ինչպես հարլիս է խորանալ այդ պրոբլեմի մեջ: Նույնիսկ այն ժամանակ, երբ ընդունվեց պաշտոնական որոշում և Սարդարապատի բարձունքներում մի հոյակերտ հուշահամալիր կառուցվեց, նրանք ամբողջ ձայնով չեն, որ խոսում էին այդ ճակատամարտի հերոսների՝ հայ ժողովրդի այն քաջարի կավակների մասին, որոնք ողջ հայությանը աղառնացող մահացու վտանգի պահին դրանորեցին զորավարական ընդունակություններ, խիստափառ հուշություն ու արիություն, չերմ անը իրենց իինալիւր հոդի նկատմամբ:

Եվ ահա առաջին անգամ այդ ամենի մասին ամբողջ ձայնով և բացառիկ շերմությամբ խոսեց այդ ճակատամարտի անմիջական մասնակից Հովհաննես Բաղրամյանը, խոսեց իր հուշերում, ո-

րոնք տքնածան հետապոտական աշխատանքի արգասիք էին: Հայկական լորքերի երևանյան խմբավորման հրամանատար գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանի (Մովսես Սիլիկով) գնդերի հրամանատարներ Դանիել բեկ և Պողոս բեկ Փիրումյանների, Սարդարապատի ճակատամարտի մյուս հերոսների անունները նա պատշաճ բարձրության հասցենց՝ որպես հայոց հոդի խակական հայրենասերների, իրենց ժողովրդի նվիրյալների անուններ:

Ահա թե ինչ է գրում Հովհաննես Բաղրամյանն իր հուշերում. «Այս կարևոր հաղթանակի նվաճման գործում վճռական դեր խաղաց հայկական 5-րդ հրամագային գունդը գնդապետ Պավել (Պողոս) բեկ Փիրումյանի գլխավորությամբ, որն այն գնդապետ Դանիել բեկ Փիրումյանի հորենքոր որդին էր, որը հաջողությամբ դեկավարում էր զորքերի սարդարապատյան ջոկատի մարտական գործությունները և Սարդարապատի ճակատամարտի մասնակիցների ընդհանուր կարծիքով այդ ճակատամարտի ամենաարժանավոր հերոսներից մեջն էր»<sup>32</sup>.

Բայց այսիկ շերմությամբ ու ակնածանքով է խոսում Բաղրամյանը գեներալ Մովսես Սիլիկյանի մասին. «Եմ կարող, վերջապես, լուրջան մատնել այն հակայական ավանդը, որ 1918 թ. գարնանը Սարդարապատի մոտ թուրքերի շահিষախման զործում ունեցավ գեներալ-մայոր Սիլիկովը, որը այդ ծանր շրջանում հայկական զորքերի երևանյան խմբավորման հրամանատարն էր: Իմ խորին համոզմամբ, Սիլիկովը այն ժամանակվա բռոր հայ գեներալներից ամենաածոված զորապետն էր: Ինչպես մյուս գեներալները և ավագ սպանները, նա, ցափոր, չէր տիրապետում մայրենի լեզվին և չուներ բավականաչափ հստակ պատկերացում իր ժողովրդի, նրա մարտական ավանդությունների և պագային բանակի անձնակապմի առանձնահատկությունների մասին: Սակայն գեներալ Սիլիկովին, ի տարբերություն մյուս ռազմական դեկավարների, համեմատա-

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 58–59:

\* Սարդարապատի ճակատամարտի մասին տես Ռ. Գ. Սահակյան, Սարդարապատի խորհուրդը: «ՀՅ», 1996, հմ. 2: Խմբ.:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 90:

բար կարձ ժամկետում՝ թուրքերի դեմ հենց առաջին մարտերի ընթացքում, իր խելամիտ և իրադրությանը համապատասխանող որոշումներով և զորքերի մարտական գործողությունների օպե-

անձնական հատկությունները: Այս հիանալի զորավարի անսովոր ռազմական տաղանդը և հայ ժողովրդի համար ահեղ 1918 թվականին հայրենիքին մատուցած նրա մեծ ռազմական ծառայութ-



Սարդարապատի ճակատամարտի մասնակից մարշալ Բարդամյանը  
Սարդարապատի հուշահամալիրում  
(«Ի. Խ. Բագրամյան. Փոտոալբոմ» գրքից)

րատիվ դեկավարմամբ հաջողվեց մեծ հեղինակություն ձեռք բերել ենթակա զորամասերի ազաների ու վինվորների հիմնական գանգվածի շրջանում:

Դետք է խոստովանեմ, որ ինձ՝ երիտասարդ ու սակավափորձ սպայիս, Սարդարապատի ճակատամարտի շրջանում միայն ամենաընդհանուր գծերով էին հայտնի գեներալ Միլիկովի դրական

յունները ամբողջովին պարզ դարձան ինձ միայն 60 տարի անց, եթե ես աշխատում էի այս հուշերի ձեռագրի վրա; Սարդարապատի ճակատամարտի մասին պատմելու համար ինձ պետք եղավ շատ ու համառորեն աշխատել՝ հավաքելով զանազան աղբյուրներում զիտեղված սուր տեղնկությունները, առադրելով ու վերլուծելով դրանք: Եվ միայն որ-

այս այդ աշխատատար հետազոտական աշխատանքի արդյունք ինձ նորովի ներկայացավ նաև Հայաստանի համար պատմական Սարդարապատի ճակատամարտում գեներալ Միլիկովի գերը: Հենց այդպիսի վերլուծական աշխատանքից հետո ես բավարար խորությամբ ըմբռնեցի, թե որքան բարդ և հակասական իրավիճակում պետք եղավ գործել գեներալ Միլիկովին: Եվ ինչպես բաղարական, այնպես էլ ուսպանական տեսակետներից ծայր աստիճան բարդ այդ պայմաններում այս զորապետն ընդունեց միակ ճիշտ, համակողմանիորեն կշռադատված, առանց չափազանցման՝ տաղանդավոր որոշումը՝ զորքերը և բոլոր նրանց, ովքեր կարող են գենք կրել, ուրիշ հանելու թուրքերի բարբարոսական ասպատակությունից հայկական բազմադարյան պետության տարածքի անձնությաց պաշտպանության համար»<sup>33</sup>:

Գեներալ Միլիկյանի իմաստնությունը, Բաղրամյանի կարծիքով, այն էր, որ հայ զորապետը որոշեց ապավիճել հայ ժողովրդի հայրենասիրությանը: Եվ Բաղրամյանն իր հուշերում բերում է այն թուրքիկների բովանդակությունը, որոնցում Միլիկյանը հայ ժողովրդին կոչ էր անում գենքը ձեռքին ենելու թուրք բարբարոսների դեմ: Այդ թուրքիկները կարդախիս, նշում է մարզալը, տուսակորություն է ստեղծվում, թե Միլիկյանը դրանք սեփական արյունով է գրել: Եվ ժողովուրդն արձագանքեց այդ կոչին՝ ահել ու ջահել, տղամարդ ու կին: Բաղրամյանն ընդգծում է, որ դա զավթիչների դեմ մղվող համաժողովրդական պատերազմ էր: Այս կապակցությամբ հուշերի հեղինակը նշում է, որ «Սարդարապատի ջոկատի զոլատի զորամասերում աշխարհագորի մարտիկների զանգվածայնորեն հայունվելը տառացիորեն ցնեց վիճականության զանգվածներին, բարձրացրեց նրանց մարտական ոգին, ամրապնդեց նրանց հավատը սեփական ուժերի նկատմամբ, հակառակորդի դեմ անձնապոհ պայքարի ոգեշնչեց նրանց»<sup>34</sup>:

<sup>33</sup> Նույն տեղում. Լ. 91:

<sup>34</sup> Նույն տեղում:

Մարշալ Բաղրամյանը ոգեշնչությամբ նկարագրում է գնդապետ Պողոս թեկ Փիրումյանի՝ ամբողջովին դարաբաղյիներով համարված, հակահարվածի գլխավոր ուղղության վրա գործող 5-րդ հայկական գնդի հայ մարտիկների զանգվածային հերոսությունը: «Ես մեծ հարգանքով լցվեցի դարաբաղյի զինվորների նկատմամբ՝ մարտում նրանց ցուցաբերած քաջության, անձնապոհության ու անվեհերության համար»<sup>35</sup>:

Բաղրամյանը նշում է, որ զորքերի ու աշխարհապորի ջոկատների համախմբման գործում էական դեր խաղացին նաև ՌՍԴԲ(բ)Կ Կոմիտայան երկրամասյին բյուրոյի ու Բարվի Ժողովումխորի նախագահ Ստեփան Շահումյանի կոչերը, որոնցով նրանք ձգտում եին միավորելու հայ ժողովրդի բոլոր առողջ ուժերը և Արևելյան Հայաստանը զերծ պահելու Արևմտյան Հայաստանի ողբերգական ճակատապղից:

Այսիսկով՝ մարշալ Բաղրամյանը, խորը Քերլուծներով Սարդարապի ճակատամարտը, նոր խոսք ասաց նրա նշանակության, նրա խմբական հերոսների մասին և որպես ջերմ հայրենասեր համովիչ կերպով ցույց տվեց, որ Սարդարապատի ճակատամարտը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի լուսավոր էշերից մեկն է: Հովհաննես Բաղրամյանի մեմ հուշերը բարձրարժեք աշխատությունը հայ պատմագիտությունը հարըստացրեց աղբյուրագիտական նոր փաստաթղթերով, նոր եկրահանգումներով և մեր ժողովրդի պատմական անցյալի նոր գնահատականներով:

Բաղրամյանն իր ողջ գիտակցական կյանքում եղել է հայ ժողովրդի՝ աշխարհի ամենահին քաղաքակիրթ ժողովուրդներից մեկի իր գոյաւուման համար մըրդած պայքարում ուսւամենտ կողմնորոշման կողմնակից: Ահա թե ինչու է նա իր հուշերում այդքան հանգամանորեն լուսաբանում թուրք բռնապավթիչների դեմ իր հարապատ ժողովրդի հերոսական պայքարը, որը մղվում էր հյուսիսային մեծ հարևանի զինված աշակցությամբ:

<sup>35</sup> Իուն տեղում:

Խիստ բնորոշ է այն հանգամանքը, որ «Իմ հուշերը» նկրափակում է մի «Վերջաբան», որում մարշալը, համառոտակի քննելով իր ժողովրդի անցած պատմական ուղին, բարձր է գնահատում հայկական ազգային-ազատագրական շարժման այն առաջադեմ գործիչների իմաստությունն ու հեռատեսությունը, որոնք «ցարիզմի հետադիմական ճակատի հետևում կարողացան տեսնել ուստի ժողովրդի պատասեր հոգին»<sup>36</sup>:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 662:

Եվ հույժ խորհրդանշական է այն, որ հայ ժողովրդի պանծավակական մարշալ Հովհաննես Քրիստափորի Բաղրամյանը այդ գրքի «Վերջաբան» ավարտում է ինեւկյալ տողերով. «Ես չեմ կարող իմ այս պատմությունը շավարտել Հայաստանի մեծ զավակ Խաչատուր Արքիանի մեկուկն դար առաջ ասված մարգարեական խոպերով. «Օրինած լինի Են մահթը, որ ոռւսները ուոք դրին մեր հայկական հողը»<sup>37</sup>:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 663:

## ВОЕННАЯ ИСТОРИЯ

### ВЫДАЮЩИЙСЯ ПОЛКОВОДЕЦ, ГОРЯЧИЙ ПАТРИОТ

(к 100-летию со дня рождения И. Х. Баграмяна)

В. А. МУРАДЯН, гвардии подполковник в отставке,  
доктор исторических наук, заслуженный деятель науки РА

#### РЕЗЮМЕ

У каждого народа есть прославленные сыновья, память о которых с годами не только не тускнеет, а становится еще светлее, еще ярче. Их дела сквозь призму времени видятся еще более весомыми и значительными, неподелимыми от прошлого и настоящего своего народа. Их образы, их подвиги служат надежным нравственным компасом для грядущих поколений. К числу таких людей по праву относится и прославленный сын героического в своей древней истории армянского народа, Маршал Советского Союза, дважды Герой Советского Союза Иван (Ованес) Христофорович Баграмян.

И. Х. Баграмян родился 2 декабря 1897 года в семье железнодорожника на станции Елизаветполь (ныне Гянджа) Закавказской железной дороги. Все его детство до 15-летнего возраста прошло на этой станции, а летние месяцы он проводил в родном селе родителей — Чардахлу, расположенном на высокогорном плато.

С 1907 по 1912 годы он учился в местном железнодорожном училище, а затем в Тифлисском железнодорожном техническом училище. Окончив его с высокими оценками, Баграмян в мае 1915 г. был назначен техником участка службы путей. Хотя подходил призывной возраст — 18 лет, но фронт юноше не угрожал, так как железнодорожников в армию не брали.

Однако Ованес Баграмян рвался на фронт, чтобы отомстить младотуркам за геноцид родного народа. Восемнадцатилетнему юноше в положении рядового солдата пришлось испытать все тяготы войны. Зарекомендовав себя в качестве храброго и рассудительного воина, он был замечен командирами и направлен в Тифлисскую школу прaporщиков. Окончив ее в июле 1917 г., он был отправлен на турецкий фронт младшим офицером. В этом чине он участвовал в боях против турецких полчищ на карсском направлении и под Сардарапатом. С первых дней образования Армянской Крас-

ной армии Баграмяну доверяются командные должности. В 1923 г. он уже командир кавалерийского полка.

Направленный на учебу в Ленинград в высшую кавалерийскую школу, Баграмян на всю жизнь подружился с однокурсником Г. К. Жуковым.

После окончания учебы они вновь встретились в 1940 г., когда Жуков, уже будучи генералом армии, командовал Киевским Особым военным округом, а полковник Баграмян, окончив Военную академию им. Фрунзе и Академию Генерального штаба, был старшим преподавателем последней. По ходатайству Жукова Баграмян был направлен на новую службу в Киевский Особый военный округ.

Встреча была очень теплой и деловой. Готовилось Всесоюзное совещание руководящего состава Красной армии, и Жукову было поручено выступить с докладом на тему «О характере современной наступательной операции». Большую помощь в подготовке доклада оказал Жукову начальник оперативного отдела штаба округа Баграмян.

Война застала Баграмяна в Киеве на посту начальника оперативного отдела — заместителя начальника штаба Киевского Особого военного округа. За боевое участие в организации обороны Киева полковнику Баграмяну 12 августа 1941 г. было присвоено звание генерал-майора.

Баграмян отличился своими знаниями и опытом и в осенних операциях 1941 г. В декабре того же года ему было присвоено звание генерал-лейтенанта, и он был назначен начальником штаба Юго-Западного фронта.

С лета 1942 г. в военной биографии Баграмяна начинается новый период деятельности: 15 июля 1942 г. приказом Ставки он назначается командующим 16-й армией. В судьбе Баграмяна особое место занимает Курская битва, ставшая не только жестоким испытанием, но, одновременно, и широчайшим полем для раскрытия его полководческого дара.

Во время подготовки к летней кампании 1943 г. был предложен план ввода в действие армии Баграмяна (к тому времени она была преобразована в 11-ю гвардейскую), который вызвал возражения командарма. Спор стал предметом обсуждения Ставки. Выслушав доводы Баграмяна, Сталин одобрил его план, который был принят без существенных изменений.

Вскоре Баграмян был назначен командующим 1-м Прибалтийским фронтом. Тогда же Сталин подписал Постановление Совнаркома СССР о присвоении И. Х. Баграмяну звания генерала армии.

В статье на конкретном фактическом материале показана деятельность Баграмяна на этом посту, отмечается его весомый вклад в осуществление грандиозной операции по освобождению Белоруссии, а также Земландской и Кенигсбергской операций. За выдающиеся успехи, достигнутые войсками 1-го Прибалтийского фронта, и высокие личные качества Указом Президиума Верховного Совета СССР от 29 июля 1944 г. генералу армии Ивану Христофоровичу Баграмяну было присвоено высокое звание Героя Советского Союза. За заслуги в завершающих операциях Великой Отечественной войны он был награжден вторым орденом Суворова 1-й степени.

После войны генерал армии Баграмян девять лет командовал войсками Прибалтийского военного округа, потом занимал ряд высоких постов в Министерстве обороны СССР, в том числе — заместителя Министра обороны. 11 марта 1955 г. ему было присвоено звание Маршала Советского Союза, а к 80-летнему юбилею он стал дважды Героем Советского Союза.

Маршал Баграмян был не только выдающимся военачальником, но и крупным военным исследователем. Непероценим вклад, внесенный им как в разработку истории Великой Отечественной войны Советского Союза, так и в освещение некоторых малоизученных проблем истории армянского народа новейшего периода. В частности, он был одним из первопроходцев в деле исследования судьбоносной для армянского народа Сардарапатской битвы, из политических и конъюнктурных соображений преданной забвению в годы культа личности. Эта битва рассматривалась и оценивалась Баграмяном не только с позиций военного историка, но и с позиций истинного патриота, человека, чьим кредо было служение своей Родине, своему Народу.

## MILITARY HISTORY

### THE OUTSTANDING COMMANDER AND PASSIONATE PATRIOT

(On the 100 th Anniversary of H. Ch. Baghramian)

V. A. MURADIAN, Lieutenant-Colonel of the Guards (retired),  
Doctor of Historical Sciences, Honored Scientist of the Republic of Armenia.

#### SUMMARY

Each nation has glorious sons, who's memory not only does not tarnish, but becomes brighter. When viewed in retrospect, their deeds become more significant, and inseparable from the past and present of their nation. Their images, their feats are dependable moral yardsticks for succeeding generations. Amongst the many people of this kind, is the famous son of the ancient Armenian nation, Marshal of the Soviet Union, two-time recipient of the award of Hero of the Soviet Union: Hovhannes (Ivan) Christoforovich Baghramian.

I. Ch. Baghramian was born on December 2, 1897, to the family of a railwayman on the Yelizavetpol (presently known as Gyanja) station of the Transcaucasian railway. He spent the first fifteen years of his life around the station. During the Summer he visited his ancestral village: Chardakhlu which lies in the highlands.

From 1907 to 1912, he studied at the local railway school, and then in Tiflis' Railway Technical School. On graduation with high marks, in May 1915, Baghramian was assigned to be a technician on a sector of the railway—a category, free of conscription.

Hovhannes Baghramian, however, was eager to get to the front, to avenge the Young Turks' Genocide of the Armenians. The eighteen year-old youth felt all the burdens of war as a soldier. Proving himself to be both brave and sensible, he was noticed by his commanders and was sent to Tiflis' Warrant-officers' College. After graduation in 1917, he was sent to the Turkish front as a junior officer. He participated in battles against Turkish regiments in the Kars theatre of war and near Sardarapat. Since the creation of the first units of the Armenian Red Army, command functions were conferred on Baghramian. In 1923, he was already commander of a cavalry regiment.

While studying at the Leningrad Cavalry Academy, Baghramian became friends with his course-mate, G. K. Zhukov.

After graduation, they met again in 1940. Zhukov, being an Army General, was the Commander of the Kiev Special Military District (okrug). Colonel Bagh-

ramian had graduated from the M. Frunze Military Academy and the Academy of General Staff, where he was a senior lecturer. Through the solicitation of Zhukov, Baghramian was assigned a new posting in the Kiev Special Military District.

When the Second World War began in the Soviet Union, Baghramian was in Kiev, as Chief of the Operations Department and Deputy Chief of Staff of the Kiev Special Military District. For his active participation in the organization of the defense of Kiev on August 12, 1941, Colonel Baghramian was assigned the rank of Major-General.

Baghramian was well-known for his knowledge and experience during the Autumn operations of 1941. In December, he was assigned the rank of Lieutenant-General and was nominated as Chief of Staff of the South-Western front.

From the Summer of 1942, a new period in the military biography of Baghramian began. On July 15, 1942, following orders from Supreme Headquarters, he was nominated Commander of the 16-th Army. The battle of Kursk has a particular place in Baghramian's military career. It was not only a harsh experience, but also a tremendous opportunity to discover his talents as commander.

During the Summer campaigns of 1943, while the Supreme Headquarters were planning the engagements of the troops under Baghramian's command, (at that time it was reassigned as the 11-th Guards' Army), he objected to these plans. The dispute became a subject of discussion at Supreme Headquarters. After considering Baghramian's arguments, Stalin approved Baghramian's version of the plan, which was then accepted without essential changes.

Soon Baghramian was nominated to be Commander of the First Baltic Front. Stalin also signed a Resolution of the Council of Peoples' Commissars (Sovnarcom) of the USSR conferring the rank of Army General on I. Ch. Baghramian.

The article discusses Baghramian's activity at this position. It shows his great contribution to the realization of the large-scale operations in Belorussia, as well as in Koenigsburg and Zemland. For the eminent successes of the troops of his First Baltic Front and for his own personal qualities, by order of the Presidium of the Supreme Soviet of the USSR dated July 29, 1944, Army General Hovhannes Christaforovich Baghramian was awarded the medal of Hero of the Soviet Union. For his achievements in the final operations of the Second World War, he was awarded, for a second time, the Suvorov Order (First Class).

For nine years after the war, Army General Baghramian commanded the troops of the Baltic Military District. Afterwards he took a number of high positions in the Ministry of Defense of the USSR, up to the position of Deputy Minister of Defense. On March 11, 1955, he was raised to the rank of Marshal of the Soviet Union. On his eightieth anniversary he was awarded his second medal of Hero of the Soviet Union.

Marshal Baghramian was not only a talented commander, but also an outstanding military scholar. He contributed not only in the elaboration of the history of the Second World War, but also in the elucidation of certain unknown problems in the modern history of the Armenian nation. In particular, he was one of the first scholars of the battle of Sardarapat which was so fateful for the Armenian nation. Such issues were relegated to oblivion during the cult of Stalin. This battle was considered and valued by Baghramian not only from the stand-point of a military historian, but also from the point of view of a true patriot, a person whose credo was to serve his fatherland and nation.

# ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ

## ԱՇԽԱՐՀԱԲԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՂԱՔԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մ. Գ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, փոխգնդապետ, պատումական գիտությունների թեկնածու

Պետության անվտանգության ապահովման հարցերը լուծելիս ռազմական, տրնտևական, բաղարական գործոնների հետ մեկտեղ կարևոր նշանակություն է ստուգում աշխարհագրական գործոնների (երկրի աշխարհագրական դիրք, բնակչության էթնիկական կազմ և այլն) հաշվառումը:

Հողագործ փորձ է արվում այս տևանկյունից տարու անդրկողմայացան և նժառատարածաշրջանի նկարագիրը: Խմբագրությունը նախատեսում է շոշափվող առանձին տեսական հարցեր ամբողջական ձևով ներկայացնել հետազ հրապարակումներում:

Աշխարհի երկրներ համակարգի քայլայման, երկու գերտերությունների գորբայ առճակատման ավարտից հետո որոշակիորեն փոխվեց աշխարհի քաղաքական մթնոլորտը: Վերջին 6-7 տարիներին զգային լայնածավալ ռազմական բախման, հատկապես միջուկային պատերազմի սպառնալիքը: Ավարտվեց մի շարք տարածաշրջանային հակամարտությունների ռազմական փուլը: Ստեղծվեցին համաշխարհային քաղաքական ու տնտեսական նոր կառույցներ:

Աշխարհի ռազմական ծախսերի ընդհանուր ծավալը 1 տրիլիոն 300 մլրդ. դոլարից կրճատվեց մինչև 800 մլրդ. դոլար (կայուն գներով): Չորս անգամ կրճատվեց զենքի համաշխարհային առևտությը: Աշխարհի բոլոր երկրների կանոնավոր զորքերի ընդհանուր քանակը 28,5 մլն. մարդուց կրճատվեց մինչև 23 մլн.<sup>1</sup>:

Թվում էր, ազատվերդ քաղաքական ու գաղափարախոսական կաղապարներից, աշխարհը շարժվում է դեպի հավասարակշռված ու արդարացի միջազգային հարաբերությունների հաստատում: Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ դեռ վաղ է ասել, թե ձևավորվել է բոլոր պետությունների ու ազգերի շահերը հաշվի առնող միջազգային հարաբերությունների և անվտանգության նոր համակարգ: Իրականում

տեղի է ունենում աշխարհաքաղաքական ուժերի նոր վերադասավորում, ձևավորվում են նոր դաշնաքներ ու պետկության ոլորտներ: Համաշխարհային պատերազմի սպառնալիքը փոխարինվում է տեղային պատերազմների ու վիճակածքային սպառնալիքով: Իր տեղը չի փիզում ռազմառուժային գործոնը: Անել է անորոշությունը, որոշ դեպքերում նաև միջազգային իրադրության կարգապահանը անկանխատեսելիությունը: Ազգերի ինքնորոշման արդարացի ու բնական պահանջը կրկին դեմ է առնում «պետությունների տարածքային անձեռնմխելիության» քարայած սկզբունքի ջատագովների հակապեկցությանը՝ պատճառ դաշնալով էթնիկական հակամարտությունների բորբոքմանը և «տարացրված» ու «զարթոնք ապրող» ազգերի ազգային-ազատագրական պայքարի ուժեղացմանը:

Վարշավայի պայմանագրի վերացումից հետո ԽՍՀՕ-ն, 25 %-ով կրճատելով իր վիճակած ուժերը, ընդարձակվում է դեպի Արևելյան Եվրոպա: Խոշորածավալ վերապիսում են սկսել Չինաստանը, Հարավ-արևելյան Ասիայի, Մերձավոր ու Միջին Արևելքի առանձին երկրներ: Տարածաշրջանային գերտերություն և իսլամական աշխարհի առաջնորդ դառնալու լուրջ հավակնություններ ե ցույցաբերում թուրքիան:

Ընդհանուր գծերով այսպիսին է

<sup>1</sup> Տես «Կրասնայ զետեմբեր», 23 հունվար 1996 թ.

այն միջազգային համատերսությունը, որի ֆոնի վրա տեղի են ունենում աշխարհաքաղաքական ուժերի բախումն ու ռազմաքաղաքական իրադրության պարզացումը մերձափորարեևլյան տարածաշրջանում և անդրկովկայայան ենթատարածաշրջանում:

Աշխարհում տեղի ունեցող աշխարհաքաղաքական ուժերի պայքարի, նրանց վերադասավորման, նոր դաշինքների ու պահեցության կենտրոնների ձևավորման իրական պատճառներն ու բուն էությունը ըմբռնելու համար անհրաժեշտ է դիմել աշխարհաքաղաքականությանը (գեոպոլիտիկա), որը «բուժուական կեղծ գիտությունից» այսօր դարձել է քաղաքագիտության կարևորագույն ճյուղերից մեկը:

Ալյունավան, նեղ իմաստով աշխարհաքաղաքականությունը քաղաքականության մեջ աշխարհագրական գործոնների հաշվառումն է: Ամերիկայի հայտնի աշխարհաքաղաքեն Ն. Սպիլկենը նշում է: «Աշխարհաքաղաքականությունը երկրի անվտանգության ապահովման նպատակով արտաքին քաղաքականության պլանավորումն է՝ աշխարհագրական գործոնների հաշվառմամբ»<sup>2</sup>:

Ներկայումս աշխարհաքաղաքականության բովանդակությունն ընդլայնվել է, և նրա գլխավոր խնդիրն են դարձել երկրի պագային-պետական անվտանգության, նրա անխափան զարգացման ապահովման նպատակով պետության աշխարհաքաղաքականության ապահովումը:

Աշխարհաքաղաքականությունը սովորեցնում է, որ պետության քաղաքականության հիմքում միշտ էլ դրված են լինում աշխարհաքաղաքական գործոնները, երկրի աշխարհաքաղաքական և պագային շահերը: ՈՒշադիր վերլուծությունը պահպանում է տափա, որ, ինչպես անպյալում, այնպես էլ այսօր, աշխարհում տեղի ունեցող մեծ ու փոքր հակամարտությունների հիմքում հիմնականում ընկած են տարրեր երկրների պագային ու աշխարհաքաղաքական շահերի միջև եղած հակասությունները:

Ոչ մի պետություն երբեք իր պագային շահերը չի գոհաբերի հանուն այլ պետության: Ոչ ոք շահագրգությամբ չէ ունենալու հզոր հարևան, եթե դա չի ըրխում իր շահերից: Ժամանակին անգիտայի պետական գործիչ և դիվանագետ Փալմերաստոնը գրել է. «Մենք չունենք հավերժական դաշնակիցներ և հավերժական թշնամիներ: Մենք ունենք մըշտական, հավերժական շահեր և պարտավոր ենք հետեւելու դրանց»<sup>3</sup>:

Չափ քաղաքագետների կարծիքով, երկու գերտերությունների աշխարհաքաղաքական մրցամարտում նախկին ԽՍՀՄ պարտությունն ու կործանումը, այլ պատճառների հետ մեկտեղ, հետեւանք էին նրա դեկավարության աշխարհաքաղաքական միամտության, մի դեկավարություն, որը ի վեհանգական ապգային-պետական շահերի տարիում էր «համամարդկային արժեքներով», մինչդեռ հիմնական աշխարհաքաղաքական հակառակորդները հետևողականորեն իրականացնում էին իրենց ապգային-պետական և դաշնակցային նպատակները:

Որոշ քաղաքական ու պետական գործիչներ մեծապես մոլորվում են՝ կարծելով, թե ուժային քաղաքականության դարաշրջանում պետությունների միշտ լավ հարաբերություններ ստեղծվում են շնորհիվ այն բարեկամական զգացմունքների, որ միմյանց նկատմամբ տածում են դրանց ժողովուրդներն ու առաջնորդները: «Միությունները ստեղծվում են ոչ թե շնորհիվ հույսերի և ըստ գայմունքների, այլ որպես հետևանք աշխարհաքաղաքական պատճառների և ուժերի հարաբերակցության: Եթե նույնիսկ այդ ընթացքում ծագում են բարեկամական

<sup>2</sup> N. Spykman. The Geography of the Peace. N.Y., 1944, p. 48.

<sup>3</sup> Сбо «Дипломатический словарь», т. 2. М., 1971, с. 454.

զգացմունքներ դաշնակյի նկատմամբ, ապա դրանք սովորաբար քաղաքական համագործակցության հետևանք են, այլ ոչ թե պատճառ»<sup>4</sup>, նշել է Սահիկմենը:

Աշխարհաքաղաքականության մեջ ընդունված է պետությունը դիտարիխի երեք կարևորագույն գործոնների տեսանկյունից՝ պատմական տարածք, ազգ և քաղաքական կառուցվածք: Ամեն մի երկրի տարածքային-աշխարհագրական դիրքի յուրահասկությամբ է պայմանափորված նրա պատմական գարգացման ինքնատիպությունը: «Աշխարհագրությունը, — գրել է Սահիկմենը, — ամենահիմնարար գործոնն է պետության արտաքին քաղաքականության մեջ; որովհետև այն ամենակայունն է: Եսիսարարները գալիս են ու գնում, մահանում են անգամ բռնապետները, բայց լիոնաշղթաներն անխորտավելի են»<sup>5</sup>:

Պետության տարածքային չափերը ապդում են նրա կողության վրա: Բնական պաշարները և կլիման պայմանափորում են բնակչության ժողովրդագրական յուրահատկությունները՝ նրա խոտությունը, զրադիմածությունը, ազգային տնտեսության կառուցվածքը և հնարավորությունները: Երկրի աշխարհագրական դիրքից են կախված արտաքին տնտեսական կապերի ուղղաձությունը, հեռավորությունը «ուժային կենտրոններից», ռազմական դիմակայության գոտիներից և վիճակած հակամարտությունների օշախներից: Դրանով են պայմանագործած նաև հարաբերությունները հարեւան երկրների հետ, որոնք կարող են լինել հավանական հակառակորդ կամ դաշնակյից: Երկրի աշխարհագրական դիրքով են պայմանափորված նաև ռազմական շինարարության ուղղվածությունը, վիճակած ուժերի խմբավորումների տեղաբաշխումը:

Պետության կայունությունն ու անվտանգությունը կախված են նաև պայման, որի հնարավորությունները հիմ-

սակառուս որոշվում են սրա էթնիկական քաղաքացրատարերի վիճակով: Ապա ձևավորող էթնոսների ներքին էներգիայից, կենսական ակտիվությունից է կախված նրա բարոյահոգեբանական և սոցիալ-քաղաքական միասնությունը և, հետևաբար, իր շահերի համար զինքը ձևորին հանդես գալու պատրաստակամությունը: Նույն աշխարհագրական տարածքում և նույն ժամանակաշրջանում ձևավորված էթնոսների խմբերը, որոնք միմյանց հետ կապված են տընտեսական և քաղաքական միջէթնիկական և մշակութային կապերով, կազմում են քաղաքակրթություն կամ սուպերէթնոսու:

Միջէթնիկական մոտիվաւթյունը նպաստում է մեկ քաղաքակրթության պատկանող երկրների ռազմական դաշնակների, միությունների առեղծմանն ու դրանց կայունությանը: Այդպիսի երկրների միջև ծագող պատերազմները երկար չեն տևում, և կողմերը հեշտ են գնում փոխպիջումների:

Վիճերի տարածքները կամ ազդեցության գոտիների համար տարբեր քաղաքակրթությունների պատկանող պետությունների պայքարը սովորաբար աչքի է ընկնում բարձր ինտենսիվությամբ ու դաժանությամբ, պատերազմը մինչև «հաղթական ավարտ» հասցնելու հաստատակամությամբ: Նման գործուներ են ընկած նաև բազմազգ պետությունների ներքին միջէթնիկական հակամարտությունների հիմքում<sup>6</sup>:

Որոշ քաղաքագետների կարծիքով (Ս. Հանտինգտոն և ուրիշներ), ազգային-պետական, քաղաքական-զարդարաբիուսական հակամարտություններն աշխարհում աստիճանաբար փոխարինվում են քաղաքակրթությունների, այսինքն՝ կրոնական-մշակութային հանրությունների հակամարտություններով: Բայտումները քաղաքակրթությունների շիման գոտում հղի են լայնածավալ պա-

<sup>4</sup> N. Spykman. America's Strategy in World Politics. The United States and the Balance of Power. N. Y., 1942, p. 255–256.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 41:

<sup>6</sup> Տե՛ս Լ. Ի. Գումիլև. Էնուգենեզ և բiosfera Յուլ. Ա., 1980, ս. 120.

<sup>7</sup> Տե՛ս Ա. Բ. Լոգինով. Էնուս և եվրազիական գեոստրատեգիա. «Վուսնա մասնակիություն» աշխատանք, 1993 թ., ս. 21.

տերապմների վերածվելու գտանքով։ Կարելի է ասել, որ բազմազգությունը տարածաշրջանային ու ներպետական կայունության վրա պահող կարևորագույն գործոններից մեկն է։

Ազգի էթնիկական կազմով, նրա սրատմական տարածքով է մեծամաս պայմանավորված պետական կառուցման ձերքի ձերք։ Ազգը և նրա քաղաքական կառուցման գունդում են մշտական հակասական փոխազդեցության մեջ։ Դրանից են հիմնականում կախված պետության ներքին կայունությունն ու անվտանգությունը։ Եթե խախտվում է ներդաշնակ հավասարակշռությունը և քաղաքական կաօռույց գերիշտում է ազգի վրա, ապա դա ի վերջո հանգեցնում է բռնապետության (ինչպես Գերմանիայում 1933—1945 թթ.): Եթե ազգն է գերիշտում պետության վրա, առաջանում է անիշխանություն (ինչպես Ժամանակակից Աֆդանատանում), որը ապահայունացնում է ուսկմաքաղաքական իրադրությունը ոչ ոչ միայն իր տարածաշրջանում, այլև հաճախ գլորավ ծավալով<sup>8</sup>։

Հասարակության քաղաքական կառուցման վեցից է կախված պետության ներքին և արտաքին գերակայությունների ու շահերի որոշումը։ Դրանց համապատասխանությունը ապօհի շահերին ապահովում է բնակչության կամավոր աշակցությունը և ամրապնդում է պետության անվտանգությունն ու պաշտպանունակությունը։ Իսկ եթե պետությունը արտաքին աշխարհի հետ իր հարաբերություններում նախապատվություն է տալիս ոչ թե ազգային շահերին, այլ ուրիշ գործոնների, ապա, որպես կանոն, նա պարտություն է կրում և կախման մեջ ընկնում ավելի ուժեղ պետություններից։

Վերը շարադրվածից պարզ է դառնում, որ յուրաքանչյուր պետության պագային անվտանգության համակարգը մեծապես կախված է նրա գոյության ու զարգացման աշխարհագրական, պատմական, աշխարհաքաղաքական, ուսկմաքարական պայմաններից։

\* Տևա նույն տեղում, 1, 21:

Այժմ փորձենք աշխարհաքաղաքականության տեսանկյունից բնորոշել անդրկովկայան և նախատարածաշրջանը, որը համարվում է մերձավորարևելյան տարածաշրջանի մի մասը։

Շրջանը իրենից ներկայացնում է էթնիկական, մշակութային, կրոնական մի բարդ խճանկար, որը հակամարտացն մեծ լիք է պարունակում։

Խորհրդային իշխանության առաջն տարիներին միութենական հանրապետությունների սահմանների, ինչպես նաև նրանց ներսում եղած որոշ պազային փոքրամասնությունների ինքնավար պետական կառուցման սահմանների որոշման գործում թույլ տրված կամայական ու միտումնավոր մոտեցման հետեւ վաճառքով ծագած հակասությունները ժամանակին վազվում էին խորհրդային տուալիտար մամլիչով։ Եվ ԽՍՀՄ վիլուգումից հետո առաջինը Անդրկովկասում ըսկրավեցին լայնածավալ ազգամիջյան հակամարտությունները։ Այդ հակամարտությունները իրենց գագաթնակետին հասան Ադրբեջանում, որտեղ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության մրած աղային-ապատագրական պայքարը ունեցավ իր արամաբանական ավարտը՝ ըստ տեղիկաց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը։ Մյուս ազգային փոքրամասնությունների (Թալիշներ, լիպգիներ) խմբումները ճնշվեցին բիրտ ուժով։ Սակայն այդ ազգերի իրական զարթոնքը նոր է սկսվելու, և Ադրբեջանը մոտակա հեռանկարում կարող է դառնալ ազգային հակամարտությունների թատերաբեմ։

Ազգային լուրջ պրոբլեմների առաջ է կանգնած Վրաստանը, որտեղ Աբխազիան ձգուում է իր անկախության ձևաչափականը, չուծված, սառեցված վիճակում է գտնվում վրաց-հարավախական հակամարտությունը, անկախության հասանելու որոշակի միտումներ է ցուցաբերում Աջարական Հանրապետությունը։ Ազգային հարցի քաղաքակիրթ, ընդունելի լուծումներ չգտնելու դեպքում Վրաստանը նույնական կարող է վերածվել մըշտական պագային բախումների գոտու։

Երեք հանրապետություններից մի-  
այն Հայաստանում է, որ գոյություն չու-  
նի որևէ ներքին ազգամիջյան խնդիր։  
Այստեղ բնակչության աննշան մասը  
կազմող (ընդամենը 4 %) ազգային փոք-  
րամասնությունների և հայերի միջև ձե-  
վավորված ներդաշնակ փոխհարաբերու-  
թյունները բացառում են տեսանելի հե-

վորդները կազմում են Վրաստանի  
բնակչության ընդամենը 65 %-ը, իսկա-  
մի հետևորդները՝ 11 %-ը, ոուս ուղղա-  
փառ եկեղեցու՝ 10 %-ը, հայ առաքելա-  
կան եկեղեցու՝ 8 %-ը, այլ ուղղություն-  
ների և աղանդների հետևորդները՝ 6  
%-ը<sup>9</sup>։

Չնայած Անդրկովկասում առկա ապ-



Ադրբեյջանից բռնագաղթած հայերին ընդունում են Երևանում  
(լուսանկարը՝ «Արմենպրես» գործակալության, 1989 թ.)

ուանկարում որևէ պրոբլեմի առաջացում  
(տես աղյուսակ 1-ը):

Կրոնամշակութային առումով ևս  
Հայաստանը յուրօրինակ բացառութ-  
յուն է անդրկովկասյան ընդհանուր ֆո-  
նի վրա։ Այստեղ հայ առաքելական եկե-  
ղեցու հետևորդները կազմում են բնակ-  
չության 94 %-ը։

Ադրբեյջանի բնակչության 87 %-ը  
դավանում է իսլամ, ընդ որում՝ 70 %-ը՝  
շիա, 17 %-ը՝ սուննի ուղղության, 5,6 %-ը՝  
ոուսական ուղղափառ եկեղեցու հետե-  
վորդներ են, 7,4 %-ը՝ այլ կրոնական ուղ-  
ղությունների ու աղանդների հետե-  
վորդներ։

Վրաց ուղղափառ եկեղեցու հետե-

գամիջյան հակամարտություններն ի-  
րենց բնույթով կրոնաէթնիկական չեն,  
այլ իրենց իիմքում ունեն ազգային ինք-  
նուրոշման խնդիրներ, այնուամենայ-  
նիվ շահագրգիռ կողմերը (Ադրբեյջանը,  
որոշակի առումով նաև Արխավիհան) ձգտում են օգտագործելու կրոնական  
գործոնը՝ արտաքին աջակցություն ըս-  
տանալու ակնկալիքով։ Այստեղից՝ աֆ-  
դան մօջահենների, թուրքական «գորչ  
գայերի» ու մահմեդական կամավորնե-  
րի հայտնվելը դարաբաղյան ճակատում,  
Կովկասի լեռնային ժողովուրդների հա-  
մադաշնության մահմեդական կամա-

<sup>9</sup> See «Armenia, Azerbaijan, and Georgia: country studies», pp. 4, 82, 152.

Ենթատարածաշրջանի նրկոնքի բնակչության աղյուսակին կազմը

Երկրություն	Բնակչությունը՝ հազար մարդ	Բնակչության համարը մարդ	Արդյունաբերությունը՝ միլիոն միլիոն	Բնակչության էթնիկական կազմը %-%								Արդյունաբերությունը՝ միլիոն միլիոն	
				Արևածագը	Արևածագը	Արևածագը	Արևածագը	Արևածագը	Արևածագը	Արևածագը	Արևածագը	Արևածագը	
Հայաստան	3,521	1,1	96	-	-	1,6	1,7	-	-	-	-	-	2,7
Վրաստան	5,681	0,81	8,1	5,7	70,1	6,3	-	-	2,0	3,2	-	-	4,5
Ադրբեյչան	7,684	1,4	-	82,7	-	5,6	-	3,5	-	-	2,5	-	5,2

փորների մասնակցությունը վրաց-աբխազական հակամարտությանը:

Եթե ընդիմանուր ջանքերով չկանխվի այս վտանգավոր միտումը, ապա հայամարտության հաջորդ վուլերում դա կարող է պայթենանել ոչ միայն Կովկասի, այլև Ռուսաստանի, Եվրոպայի, Ասիայի խաղաղությունը և սպառնալիք դառնալ տարածաշրջանային ու համաշխարհային անվտանգության համար:

Եթեք հանրապետություններից առավել նպաստավոր տնտեսական ու աշխարհագրական պայմաններում է գրանցություն Ադրբեյչանը: Նա ունի ԱՊՀ երկրների շարքում Ռուսաստանից հետո ամենախոշոր հետապոտված նավթային պաշտանություն (մինչև 4 մլրդ. տոննա) և հեռանկարություն Պավաստանի ու Թուրքմենիայի հետ մեկտեղ կարող է դառնալ նավթարդյունահանման ծալքալով աշխարհի երրորդ շրջանը (Միբիրից և Պարսից ծոցից հետո)<sup>10</sup>:

Սակայն Ադրբեյչանի աշխարհաքաղական պարագորսն այն է, որ, չնայած նաև նրա պաշտանությունը և նրա քաղաքական առանձնահատկությունները հնարավորություն են առեղծում ակտիվորեն համագործակցելու և՝ Արևելիք, և՝ Արևմուտքի հետ, բայց աշխարհագրական դիրքը՝ Միջին Ասիայի, Մերձավոր Արևելիքի, Եվրոպայի սահմանագծում գտնվելը, հանգեցնում է Արևմուտքի երկրների, ամենից առաջ ԱՄՆ-ի և Թուրքիայի քաղաքական ու տնտեսական ճնշման ուժնեղացմանը: Կարենոր տրանսպորտառավագարական նշանակությա-

նը կուգահեռ (Եվրոպա-Միջին Ասիա հաղորդակցության միջանցք) Ադրբեյչանը ունի նաև բացառիկ ռազմավարական նշանակություն իր տարածքում գտնվող Գյարապահի ռադիոտեղորոշումային կայանով, որը Ռուսաստանի վրա հարավից երթիուային հարձակման մասին նախազգուշացնական համաշարգի կարևորագույն բաղադրատարրն է<sup>11</sup>:

Վրաստանը նույնպես գրավում է բավական նպաստավոր աշխարհագրական դիրքը: Չնայած իր բնակչական այլաշարներով նա զիջում է Ադրբեյչանին, աևկայան որպես հաղորդակցության միջանցք, շնորհիվ Աև ծովի առկայության, առավել մեծ հնարավորություններ ու հեռանկարներ ունի:

Աշխարհագրական առումով ննթատարածաշրջանի երկրներից ամենաանբարենպատ պայմաններում գտնվում է Հայաստանը, քանի որ զորքի է դեպի ծով տանող անմիջական ելքից և առևտրական ուղիներ դուրս գալու հարցում իլովին կախված է հարեւան պետությունների բարի կամքից: Այստեղից հետեւմ է, որ պատմական հեռանկարում, անգամ դեպքերի ամենաբարենպատ պարգայման պարագայում էլ Հայաստանի բարգավաճումը կախված կլինի հարեւան պետությունների ներքաղաքական կայունությունից և նրանց հետ ունեցյած բնականուն փոխհարաբերություններից: Միայն այս գործուները կարող են ապահովել անխափան առևտուր և խթանել երկրի տնտեսական զարգացումը:

Տնտեսապես շրջանը դատապարտված է դեռ երկար մնալու որպես իս-

<sup>10</sup> Տես «Հեզանումայ» գազետ», 8 ապրիլ 1997 թ.

<sup>11</sup> Տես «Сегодня», 24 мая 1996 г.

մաշխարհային տնտեսության ծայրամաս:

Խորենդային շրջանում Անդրկովկասի տնտեսապես բարվոր վիճակը մեծապես պայմանավորված էր խորենդային տնտեսության յուրահատկություններով: Հաջողությամբ պարզացող ծանր և վերամշակող արդյունաբերությունը գրեթե ամբողջությամբ կողմնորոշված էր յեպի համամիտքենական շուկան և աննշան շափով էր բավարարում տեղական պահանջմունքները: Ներկայումս արտադրական կապերի խորմը, հումքի և շուկայի բացակայությունը գրեթե ամբողջությամբ կազմալուծել են Անդրկովկասի արդյունաբերության շատ ճյուղերի գործառությունը: Ի վիճակի չինելով պահպաններու գործություն ունեցող արտադրական ենթակառությունը՝ շրջանի երկրության առաջական առաջարկանի շատ թերթիչ մասմանականից արտադրությունից:

Երեք հանրապետությունների տընտեսության պարզացումն արգելակող գործուներից են մեծ ռազմական ծախսերը: Դրանք ամբողջությամբ կաթածահար են արել Ադրբեյջանի տնտեսությունը՝ առանձին տարիների կազմելով պետական բյուջեի շուրջ 75 %-ը: Ադրբեյջանը 1992—1996 թթ. ռազմական նըպատակներով օգտագործել է միջազգային ֆինանսական կազմակերպություններից ու առանձին պետություններից ստացված արտաքին փարկերի ու ֆինանսական օգնության հիմնական մասը: Ռազմական ծախսերի բաժմնը Ադրբեյջանի սպագային համախառն արտադրանքի մեջ կազմել է. 1992 թ.՝ 7,1 %, 1993 թ.՝ 9,5 %, 1994 թ.՝ 15,1 %, 1995 թ.՝ 13,6 %, 1996 թ.՝ 15,7 %: Այս ցուցանիշով նա գրավում է առաջին տեղը մերձափորարևելյան տարածաշրջանում, որը աշխարհի ամենառազմականացված տարածաշրջաններից մեկն է<sup>12</sup>:

Ռազմական ծախսերը կազմում են Հայաստանի պետական բյուջեի 20—28 %-ը, ապգային համախառն արտադրանքի 2,8—3,6 %-ը, Վրաստանի բյուջեի

<sup>12</sup> Տես Մ. Գ. Մելքոնյան, Ադրբեյջանի ռազմական նախապատրաստությունների ֆինանսավորումը: «Հայ դինավոր», 1997 թ., հմ. 24, էջ 12—13:

18—25 %-ը, ապգային համախառն արտադրանքի 2,3—3,3 %-ը<sup>13</sup>:

Անդրկովկասի հանրապետությունները աստիճանաբար տնտեսական մեծ կախման մեջ են ընկնում Արևմուտքի երկրներից և նրանց հսկողության տակ գտնվող միջազգային ֆինանսական կազմակերպություններից:

Այսպիսի 1997 թ. ապրիլի դրությամբ Վրաստանի արտաքին պարտքը կազմել է 1 մլրդ. 600 մլն. դոլար, որը հավասար է երկրի ապգային համախառն արտադրանքի 44 %-ին՝ դրանական արտահայտությամբ: Սա բավական բարձր ցուցանիշ է և կարող է ունենալ լուրջ բազասական հետևանքներ ողջ տնտեսության համար<sup>14</sup>: Ադրբեյջանի արտաքին պարտքը, ըստ պաշտոնական տվյալների, ներկայումս կազմում է 1 մլրդ. 123 մլն. դոլար<sup>15</sup>: 1996 թ. վերջի դրությամբ Հայաստանի արտաքին պարտքը 603 մլն. դոլար էր<sup>16</sup>: Տնտեսական ծանր վիճակը շրտվելու նպատակով շրջանի երկրներից յուրաքանչյուրը հարկադրված է տարեկան 200—250 մլն. դոլար վարկ ստանալու սանդի, վառելիքի, դեղորայքի ապահովման և այլ ծրագրերի իրավանացման համար: Ներկայումս արտահամարտությունների կազմում են այս հանրապետությունների բյուջեների 50—60 %-ը<sup>17</sup>:

Սակայն արտասահմանայն երկրների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից անդրկովկայան հանրապետություններին շռայլորեն տրամադրվող վարկերն ու կատարվող կայիտալ ներդրումներն ավելի շատ բարձրական բովանդակություն ունեն, քան կազմական վերջիններիս տնտեսական վերածննդի հեռանկարի հետ:

<sup>13</sup> Հայշարկված է, բայց «The Military balance 1995/96 թ.» London, 1995 տեղեկատուի.

<sup>14</sup> Ըստ «Ակատուրյուն» ռադիոկայանի 1997 թ. ապրիլի 23-ի հաղորդման:

<sup>15</sup> Ըստ «Ակատուրյուն» ռադիոկայանի 1997 թ. հունիսի 11-ի հաղորդման:

<sup>16</sup> Տես «Հայաստանի Հանրապետություն», 1997 թ. մակումների 19:

<sup>17</sup> Տես «Сергоя», 24 մայ 1996 թ.

Ռազմական առումով Անդրկովկասը թե՛ բնակչության (16,9 մլն. մարդ) մեկ շնչին, թե՛ տարածքի (186 հազ. քառ. կմ) մեկ քառակույի կիրումնությին ընկնող սպառավիճության առումով ոչ միայն նախկին ԽՍՀՄ, այլև աշխարհի ամենառազմականացված շրջաններից մեկն է: Այսուհետ 300 կմ լայնությամբ և 700 կմ խորությամբ տարածքում ԽՍՀՄ-ի օրոք ատեղված էր երկու ռազմական օկրուգի (Անդրկովկասայան ռազմական և Անդրկովկասայան սահմանապահ), ՀՕՊ-ի բանակի, օդային բանակի, Կասպիական նավատորմինիի և մեծ բանակությամբ կենտրոնական ենթակայության գորամիավորումների ռազմական գործողությունների և կենսագործունեության ապահովման ենթակառույցների մի ահուելի ցանց. որը զորքերի անդրկովկասայան խմբավորմանը թույլ էր տալիս մեկ ամիս ինքնուրույն լայնածավալ մարտական գործողություններ վարել Հարավային ռազմավարական ուղղությունում<sup>18</sup>:

ԽՍՀՄ փլուզումով (1991 թ. գեկտեմբերի 26) ամբողջ ենթակառույցը, ռազմատեխնիկական և նյութատեխնիկական միջոցները անցան նորանկախ հանրապետություններին: Սակայն արդարացի բաժանում չփառարձեց: Ամենից շահավետ պայմաններում հայտնրվեց Ադրբեջանը, որի տարածքում տեղակայված էին ավելի շատ զորամիավորումներ, ռազմաօդային խարսխակայաններ, ռազմավարական ուղղություններ:

1992 թ. հուլիս—օգոստոս ամիսներին ուսւամբան բոլոր զորամիավորումների ու սուրաբաժանումների անձնակազմը գուրս բերվեց Ադրբեջանից՝ վերջինիս թողնելով ողջ մարտական տեխնիկան, գենքերը, նյութատեխնիկական պաշարներն ու ռազմական ենթակառույցը:

Հայաստանի ու Վրաստանի պարագայում իրավիճակն այլ կերպ դասավորվեց: Բայց նրանից, որ այս հանրապետությունների տարածքում տեղակայված ոռուսական զորամիավորումնե-

րի քանակական ու մարտական կազմը ինչպես նաև առկա ռազմական ենթակառույցը միջում էին Ադրբեջանում եղածներին, ուստական զորքերի մի մասը ռազմակայանների կարգավիճակով մնաց այստեղ, Հայաստանում՝ մեկ, Վրաստանում՝ չորս ռազմակայան: Այդ պատճառով այստեղ սուլա վենքը, մարտական տեխնիկան ու ռազմական ենթակառույցը բաժանվեցին երկու մասի, մի մասն անցավ ատեղված ազգային վիճակով ուժերին, մյուս մասը՝ ուստական ռազմակայաններին: Արդյունքը եղավ այն, որ Ադրբեջանին բաժին հասան 2,5 անգամ ավելի ծանր վիճակում (տանկ, զրահամերենա, հրետանային համակարգեր) և 7,8 անգամ ավելի օդային հարձակման միջոցներ, քան Հայաստանին, 6,5 անգամ ավելի ծանր վիճատեսակներ և 11,3 անգամ ավելի օդային հարձակման միջոցներ, քան Վրաստանին (տես աղյուսակ 2):

Ավելի անարդարացի բաժանում ըստացվեց վիճամթերքի հարցում: Ադրբեջանին բաժին հասավ 20 անգամ ավելի շատ վիճամթերք (10.000 զարգոն), քան Հայաստանին (500 զարգոն), և 5 անգամ ավելի, քան Վրաստանին (2.000 զարգոն)<sup>19</sup>:

Սակայն Ադրբեջանը չփափարարվեց ստացած հսկայական պաշարներով և 1993 թ.—1997 թ. հունիսի 1-ը ժամանակահատվածում տարբեր երկրներից գրնեց և իր վիճանույր համալրեց 784 մլն. դոլար ընդհանուր արժողությամբ տարբեր տեսակի վենքով ու մարտական տեխնիկայով և 180 մլն. դոլար արժույթյամբ վիճամթերքով<sup>20</sup>:

Ադրբեջանը անդրկովկասայան հանրապետություններից միակն է, որը կոպտորեն խախտում է Եվրոպայում տուփորական վիճակով ուժերի մասին պայմանագրի շրջանակներում իր ստանձնած պարտավորությունները միանգամից երեք վիճատեսակների (տանկեր, մարտական զրահամերենաներ, հրետա-

<sup>19</sup> Տես նույն անդրամաս:

<sup>20</sup> Տես Մ. Գ. Մելքոնյան, Ադրբեջանի ռազմական նախապարասությունների ֆինանսավորումը: «Հայ վիճակ», 1997 թ. հն. 24, էջ 12:

<sup>18</sup> Տես «Свободная Грузия», 16 դեկտեմբեր 1992 թ.

նային համակարգեր) գծով և այն էլ՝ ընդհանուր 1.180 միավորով։ Որդեգրելով դարաբաղյան հիմնահարցը ռազմական ճանապարհով լուծելու քաղաքականությունը՝ Ադրբեջանը դարձել է շրջանում զենքի մրցավազքի գլխավոր հրահրիչն ու իրավիճակն ապակայունացնողը<sup>21</sup>։

Անդրկովկաստմ քաղաքական իրա-

նիայում տիրող իրավիճակի կամ տեխնոլոգիական պատճառներով դա տեղի չունենա, և արտահանումն իրականացվի միայն Վրաստանի ու Թուրքիայի տարածքով, ապա վերջիններիս եկամուտները կաճեն ամենաքիչը կրկնակի<sup>24</sup>։

Զգտելով նավային գործոնը ծառայեցնելու իր աշխարհաքաղաքական

**Այլուստ 2**  
Նախկին խորհրդային բանակի մարտական տեխնիկայի բաշխումը  
անդրկովկաստմ հանրապետությունների և ՌԴ միջև 1993 թ. հունվարի 1-ի դրությամբ<sup>22</sup>

Մարտական տեխնիկայի տեսակներ	Ադրբեջան	Հայաստան	ՌԴ ռազմակայումը	Վրաստան	ՌԴ ռազմակայումները Վրաստանում
			Հայաստանում		
Տանկ	330	129 <sup>23</sup>	80	66	200
Ջրահամերներ	835	269	190	120	570
Դաշտային իրետանք	330	179		60	
Ավանաներ	250	82	100	14	220
Համազարկային կրամի					
Ռահելի համակարգ	74	47		18	
Դիրքադրիո (մարտական)	65	6	8	6	45
Ուղղաթիո (մարտական)	37	7	-	3	-

դրության հետագա զարգացումը մեծապես կախված է Կասպիչ ծովի նավթի արդյունահանման և նրա արտահանման ուղիների խնդրից։ Ներկայումս, եթե իշխանության համար մըլքող պայքարը Ադրբեջանում և Վրաստանում ավարտվել է կառավարող կուսակցության հաղթանակով, շրջանում իշխող դիրքեր գրավելու համար մեծ տերությունների միջև պայքարը գնալով ուժեղանում է։

Ռուսաստանի ենկամուտները ադրբեջանական և դաշտական նավթի արտահանումից (ինչպես «Վարչ», այնպես էլ «հիմնական») կլասմեն 3—5 մլրդ. դոլար, թուրքիայի և Վրաստանի եկամուտները՝ 1—1,5 մլրդ. դոլար յուրաքանչյուրինը, եթե Կասպիչ ծովում արդյունահանվող ադրբեջանական և դաշտական նավթի 65 %-ն արտահանվի Ռուսաստանի տարածքով։ Բայց եթե Զե-

